

Ներսես Պետրոս ԺԹ Հայ Կաթողիկե Պատրիարքի Մարմինը Յանձնուեցաւ Հողին



Տէր Ներսես Պետրոս ԺԹ. պատրիարքի թաղման կարգը

Կեդրոնական Պէջուլի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Սուրբ Եղիա Աթոռանիստ եկեղեցւոյ Յունիս 30-ի յետմիջօրէին տեղի ունեցաւ Տանն Կիրիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքի թաղման կարգը եւ յուղարկաւորութիւնը, հանդիսապետութեամբ Հայ Կաթողիկէ Համայնքի կառավարիչ Արհիպատիւ հայր Գրիգոր Եպս. Ղարպոյեանի: Արարողութեան ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիրիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը, մարտիրոսներու Կարտինալ Պրշարա Ռաաի պատրիարքը, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան նախագահ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Խորհրդարանի նախագահ Նւպիս Պրըրիի ներկայացուցիչ երես-

փոխան Միշէլ Մուսա, վարչապետ Թամմամ Սալամի ներկայացուցիչ տնտեսութեան նախարար Ալէն Հաքիմ, Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան, Լիբանանի Հանրապետութեան նախկին նախագահ Միշէլ Սլէյման, հայ քաղաքական կուսակցութիւններու ղեկավարներ ու ներկայացուցիչներ, հայ եւ ոչ հայ նախարարներ ու երեսփոխաններ, հոգեւորական, քաղաքական, գիտնորական եւ դիւանագիտական անձնաւորութիւններ: Արարողութեան ընթացքին հայերէնով եւ արաբերէնով ընթերցուեցաւ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Սիւնհոգոսական Հայրերու ուղերձը, Հռոմի Ֆրանչիսկոս Պապին, Ամենայն Հայոց Գարեգին Բ.

Շաբ.ք էջ 20

Հայաստանի Իշխանութիւնները Մասնակի Նահանջեցին, Սակայն Նստացոյցը Կը Շարունակուի Բաղրամեանի Վրայ



Յոյցերը կը շարունակուին Երեւանի մէջ

Երեւանի Բաղրամեան պողոտային վրայ որոշ լարուածութեամբ կը շարունակուին ելեկտրականութեան սակագինի բարձրացումին դէմ բողոքի ցոյցերը, որոնք սկսած էին Յունիս 22-ին եւ աւելի մեծ թափ ստացած էին Յունիս 23-ի առաւօտեան ցուցարարներու դէմ գործադրուած բռնութիւններէն ետք: Օրեր շարունակ լուռ մնալէ ետք, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան անցնող շաբաթավերջին հանդէս եկաւ առաջարկութեամբ մը, որ որոշ չափով մեղմացուց միջոցառումը, սակայն չաջողեցաւ ապահովել նստացոյցի դադարեցումը: Սարգսեան թելադրեց Յովիկ Աբրահամեանի գլխաւորած կառա-

վարութեան, որ իր վրայ վերցնէ ելեկտրականութեան հոսանքի սակագինի իւրաքանչիւր քիլովաթի համար 7 դրամով բարձրացումի ծախսերը, մինչեւ որ կատարուի անկախ հաշուապահական քննութիւն: Սարգսեան ըսաւ որ, եթէ հաստատուի սակագինի բարձրացման արդարացիութիւնը, այն ատեն է որ քաղաքացիները կը սկսին վճարել չաւելումը: Նախագահի այս առաջարկէն ետք, որոշ պառակտում յառաջացաւ ցոյցերու նախաձեռնող «Ոչ թալանին» շարժումի երիտասարդ անդամներուն միջեւ: Անոնցմէ ոմանք նախընտրեցին դադարեցնել

Շաբ.ք էջ 5

Իսթանպուլի Հայկական Մանկատան Հարցը Հասած է Եւրոպական Կառոյցներուն



Իսթանպուլի հայկական Քամի Արմէն անունով յայտնի Թուզլու թաղամասի մանկատան հարցը յայտնուած է Եւրոպայի Խորհուրդի եւ Եւրոպական Խորհրդարանի մօտ: Թրքական «Միլլիէթ» թերթի փոխանցմամբ, Թուրքիոյ Մարդու իրաւունքներու Միութիւնը յայտարարած է, որ Քամի Արմէն մանկատանը Պոլսոյ Գեղիկիաշաջի հայկական եկեղեցիին վերա-

դարձնելու համար նամակ ուղարկած է Եւրոպայի Խորհուրդին եւ Եւրոպական Խորհրդարանին: Մարդու իրաւունքներու Միութեան անունով ելույթ ունեցած փաստաբան էրեն Քեքլին յայտնած է, թէ իրենք ամէն ինչ պիտի ընեն Քամի Արմէնը հայկական եկեղեցիին վերադարձնելու համար եւ արդէն հարցը եւրոպա-

Շաբ.ք էջ 5

Տեղի ունեցած է Սուրիահայերու Խնդիրները Համակարգող Յանձնաժողովի Գիտը

Յունիս 26-ին տեղի ունեցած է սուրիահայերու խնդիրները համակարգող միջգերատեսչական յանձնաժողովի ընթացիկ նիստը, գոր վարած է յանձնաժողովի նախագահուհի, ՀՀ Սփիւռքի նախարարուհի Հրանուշ Յակոբեան: Նախարարուհին նշած է, որ Սուրիոյ մէջ իրավիճակը ծանր է եւ հոնկէ հեռացող սուրիահայերը օր ըստ օրէ աւելի կը հակին այն համոզումին, որ լաւագոյն տարբերակը Հայաստան հաստատուելն է, քանի որ Հայրենիքի մէջ աւելի արագ կը լուծուին ընկերային, կրթական, առողջապահական եւ միւս խնդիրները: «Մենք ամէն օր ընդունում ենք նրանց եւ ըստ անհրաժեշտութեան լուծումներ տալիս կեցութեան առաջնահերթ խնդիրներին: Հիմնական հարցը մնում է նորեկներին բնակարաններով եւ աշխատանքով ապահովելու հարցը», նշած է նախարարուհին՝ աւելցնելով՝ «ամառային շրջանում կարելոր է կազմակերպել նաեւ սիրիահայ երեխաների ճամբարային հանգիստը»: ՀՀ Արտաքին գործոց նախա-

րարի տեղակալ Սերգէյ Մանասարեան ներկայացուցած է Սուրիոյ մէջ տիրող լարուած իրավիճակը եւ հայ համայնքին խնդիրները: Նշուած է, որ ներկայի տուեալներով՝ Սուրիոյ մէջ դեռ կը մնան մեծ թիւով հայեր, եւ այն վայրերուն մէջ, ուր ռազմական գործողութիւնները կը սաստկանան, կը մեծնայ նաեւ մարդասիրական տագնապը: Հալէպ գրկուած է համացանցային կապէ: Դժուարացած է նաեւ ոչ հայկական անուն եւ մականուն ունեցող հայերուն հայկական անձնագրեր տրամադրելու հարցը: Սուրիահայերու հանրակրթական եւ բարձրատիճան ուսման կազմակերպման ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն մասին խօսած է ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչեան: Երեւանաբնակ սուրիահայերու ընկերային աջակցութեան ծրագիրներու մասին խօսած է Երեւանի քաղաքապետարանի ընկերային ապահովութեան վարչութեան պետ Ռուզաննա Զաքարեան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռոբերտ Քոչարեանը Կը Թեժացնի Իրավիճակը

ՅԱԿՈՒԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի գրասենյակի ղեկավարը news.am-ին ասել է, որ Քոչարեանը առայժմ չի ուզում հրապարակայնորեն արտայայտուել էլեկտրաէներգիայի գնի թանկացման վերաբերեալ, քանի որ չի ցանկանում թեժացնել առանց այդ էլ լարուած մթնոլորտը: Սողոմոնեանը ասել է, թէ առաջիկայում նա իր տեսակէտը անպայման կը ներկայացնի հանրութեանը, ընդ որում ոչ միայն այդ, այլ նաեւ կուտակուած միւս խնդիրները վերաբերեալ: Մինչ այդ, Ռոբերտ Քոչարեանը մեկնել է Մոսկուա, Սիստեմա ընկերութեան տնօրէնների խորհրդի նիստին մասնակցելու համար, որտեղ աշխատում է նախագահի պաշտօնը թողնելուց յետոյ:

Այդ ի՞նչ պէտք է ասի Ռոբերտ Քոչարեանը, որը կը թեժացնի առանց այդ էլ լարուած մթնոլորտը: Ռոբերտ Քոչարեանը ստեղծուած իրավիճակի վերաբերեալ ասելիք անկասկած կ'ունենայ: Հայաստանի էլցանցերի մասնաւորեցումը տեղի է ունեցել հենց նրա նախագահութեան տարիներին: Այդ իմաստով, Ռոբերտ Քոչարեանը ունի հանրութեանը բացատրութիւն տալու շատ բան, սկսած նրանից, թէ ինչո՞ւ է վերջոյ տապալուեց Հայաստանի էլցանցերը երկու փաթեթով, մրցակցային հեռանկարով վաճառելու մրցույթը, որ անցկացուած էր ՀԲ հետ եւ որից դուրս էին մնացել ռուսական ընկերութիւնները: Ինչո՞ւ է յետագայում ցանցերը վաճառուեցին ուրտուած գործուեցութեան փորձ չունեցող, օֆշորային «Միդլենդ ռեսուրսիզին», որը իրականում այդ ժամանակ Աժ պատգամաւոր Յարութիւն Փամբուկեանինն էր:

Գուցէ, ինչպէս Գոլդեն փալաս հիւրանոցի ղեկավարը, ցանցերի ղեկավարը էլ Ռոբերտ Քոչարեանին հաւաստիացրել էին, որ կատարուած է օտարերկրեայ ներդրում: Երբ երեւանում բացուեց Գոլդեն փալաս հիւրանոցը, Ռոբերտ Քոչարեանը յայտարարեց, թէ ներդրող կիպրական օֆշորային ընկերութեան հետեւում որեւէ հայաստանցի պաշտօնեայ չկայ, ինքն անձամբ է դա պարզել: Ընդամենը օրեր անց մամուլում բացայայտուեց, որ այդ ներդրման հետեւում առնուազն ֆորմալ առումով Հայկ ձշմարիտեանն է՝ այն ժամանակ տրանսպորտի փոխնախարար, ներկայում էլ կոնսուլական նախարար Կարէն ձշմարիտեանի եղբայրը:

Արդեօք Ռոբերտ Քոչարեանը գիտէր, որ 2002 թուականին ցանցերը վաճառուած է Յարութիւն Փամբուկեանի ընկերութեանը: Ինչո՞ւ այդ ընկերութիւնը ստացաւ մոնոպոլ կարգավիճակ: Ինչո՞ւ ցանցերը չվաճառուեցին գոնէ երկու փաթեթով, որպէսզի լինէր մրցակցութիւն: Արդեօք գիտէր Քոչարեանը, որ յետոյ Փամբուկեանը ցանցերը վաճառելու էր ռուսական ՌԱՈ ԵՖՍ-ին, որը փաստօրէն Հայաստանի համար գերկարեւոր ոլորտում ստանալու էր մենաշնորհ, լինելով այլ պետութեան պատկա-

նող ընկերութիւն: Արդեօք Ռոբերտ Քոչարեանը գիտէ, թէ Յարութիւն Փամբուկեանը յետոյ որքան աւելի թանկ վաճառեց ցանցերը ռուսական ընկերութեանը:

Ռոբերտ Քոչարեանի խօսքն այդ ղեկավարը իրապէս աւելորդ չի լինի, եւ նա իզուր է գերծ մնում իրավիճակը թեժացնելուց: Աւելին, այդպիսով նա աւելի կը գուրալի իրավիճակը, հանրութեան համար շատ աւելի բան պարզ կը լինի, շատ աւելի կը յստակեցուի այն մեխանիզմը, որով հասունացել է հներգետիկ ճգնաժամը Հայաստանում:

Թէ՛ Ռոբերտ Քոչարեանը ակնարկում է, որ պատմութեան մէջ մեծ դերակատարում է ունեցել նաեւ Սերժ Սարգսեանը եւ նրան առաջարկում է գործարք: Քոչարեանն ասում է, որ կարող է խօսել, բայց առայժմ կը լռի, որ աւելի չսորի իրավիճակը:

Ըստ երեւոյթին, երկրորդ նախագահը համարում է, որ Սերժ Սարգսեանը ներկայում յայտնուել է բարդ իրավիճակում, եւ այժմ հնարաւոր է նրան ենթարկել որոշակի շանտաժի կամ հոգեբանական ճնշման: Ըստ այդմ Քոչարեանը, ակնարկելով խօսելու եւ «կրակին իւղ լցնելու» հնարաւորութեան մասին, փորձում է հասկանալ, թէ Սերժ Սարգսեանն ինչ կը տայ իր լուրթեան դիմաց: Այդպիսով, երկրորդ նախագահը գուցէ ակնկալում է Սերժ Սարգսեանին մղել փոխզիջման եւ դրա միջոցով գոնէ ինչ որ մասով հետ բերել քաղաքական դիրքերի առումով Փետրուարի յայտնի իրադարձութիւնների հետեւանքով կորցրածը:

Բացառուած չէ նաեւ, որ երկրորդ նախագահի ակնարկի շարժառիթը այլ է, եւ նա գուցէ մտաւախութիւն ունի, որ Սերժ Սարգսեանը քաղաքացիական բողոքի դէմ լուծումների որոնումներում կարող է դիպչել հարցերի ու նրբերանգներին, որոնք շօշափում են Ռոբերտ Քոչարեանի շահերը, այսպէս ասած դրանցով փորձում լուծում գտնել եւ Քոչարեանի շահերը դարձնել իր ու քաղաքացիների միջեւ փոխզիջման առարկայ: Ըստ այդմ էլ Ռոբերտ Քոչարեանը յայտարարում է, որ անտեղեակ չէ հնարաւոր ուսկեներին, հետեւում է իրադարձութիւններին, եւ եթէ Սերժ Սարգսեանը որոշի ինչ որ մասով անգամ գոհել իր՝ Քոչարեանի շահերը, ապա նա ի պատասխան կը բացայայտի բաներ, որոնք ուսկ կը լինեն Սերժ Սարգսեանի համար:

Հնարաւոր է իհարկէ, որ Ռոբերտ Քոչարեանի «ներկայ-բացակայ» ակնարկը ունի աւելի լայն համատեքստ, հասցէագրուած է աւելի լայն, արտաքին շրջանակի: Չի բացառուում, որ Քոչարեանը կասկածներ ունի հներգետիկ այդ թնջուկի վրայ Սերժ Սարգսեանի եւ Ռուսաստանի յարաբերութեան վերանայման գործընթացի կապակցութեամբ եւ փորձում է դուրս չմնալ դրանից եւ յիշեցնել, որ ինքն էլ կարեւոր դերակատարում է ունեցել պատմութեան մէջ, հետեւաբար ակնկալում է նաեւ իր դերի վերանայում:

«ԼՐԱԳԻՐ»

Անտեսանելի Սադրանք՝ Բաղրամեան Պողոտայում

Վերջին մէկ շաբաթուայ ընթացքում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դէմ ընթացող բողոքի ակցիաներում եւ դրանից դուրս ամենաշատը «հայհոյուող», անուանարկուող երեւոյթը քաղաքականութիւնն է: Ի դէմս քաղաքականութեան՝ ձեւաւորուել է մի իւրայատուկ «բոբո», եւ դրան մօտենալը կամ դրան մօտ թողնելը գրեթէ հռչակուած է՝ որպէս մահացու մեղք: «Ո՛չ թալանին» նախաձեռնութիւնն ի սկզբանէ, իհարկէ, յայտարարել է, որ իրենց պայքարը քաղաքացիական է եւ չի վերաճելու քաղաքականի: Սակայն, անկախ դրանից, անկախ երիտա-

Ու դա հերթական անգամ ցոյց է տալիս մեր քաղաքական համակարգի ախտահարուածութիւնը. քաղաքական ուժերն այնքան են հեղինակազրկուել, որ հեղինակազրկել են քաղաքականութիւն երեւոյթն ընդհանրապէս:

Վերջին մի քանի տարիներին փողոցը դադարել էր քաղաքական գործօն լինելուց՝ փողոցի միջոցով հասարակութեանը յուսախաբարած քաղաքական ուժերի պատճառով: Հիմա կրկին փողոցը քաղաքական գործօն է, բայց առանց քաղաքական ուժերի: Սա, մի կողմից, անորմալ երեւոյթ է, միւս կողմից՝ գուցէ նաեւ հնարաւոր-

Քաղաքացիական նախաձեռնութեանը յաջողուել է անպատկերացնելի մեծ յաջողութեան հասնել՝ քաղաքական բովանդակութիւն ունեցող պահանջներ առաջ քաշելով, սակայն դրա շարունակութիւնը արդէն քաղաքական հարթութիւնում գտնուող գործիքներ ու լուծումներ է պահանջում

սարգսեանի ցանկութիւնից, պայքարն առաջին իսկ օրուանից եղել է քաղաքական եւ, առաւել եւս, այդպիսին է դարձել բողոքի ակցիաների իւրաքանչիւր օրուայ հետ:

Խնդիրը, վերջին հաշուով, հանգում է նրան, որ քաղաքացիական նախաձեռնութեանը յաջողուել է անպատկերացնելի մեծ յաջողութեան հասնել՝ քաղաքական բովանդակութիւն ունեցող պահանջներ առաջ քաշելով, սակայն դրա շարունակութիւնն արդէն, այսպէս թէ այնպէս, քաղաքական հարթութիւնում գտնուող գործիքներ ու լուծումներ է պահանջում: Այդ իմաստով քաղաքական որեւէ ուժի կողմից շարժումն այս կամ այն կերպ իր նպատակներին ծառայեցնելու փորձը չպէտք է դատապարտուի, ինչպէս արւում է վերջին օրերին, առաջին հերթին՝ իշխանական շրջանակների, բայց նաեւ քաղաքացիական ակտիւիստների կողմից: Այլ հարց է, որ քաղաքական ուժերը դա պէտք է անեն ոչ թէ «տակից», այլ հրապարակաւ, հասարակութեանն ազնուօրէն ներկայացնելով, թէ իրենց որ նպատակին կամ նպատակներին են ցանկանում ծառայեցնել ժողովրդական այս շարժումը:

Նպատակները կարող են բազմազան լինել՝ սկսած իշխանափոխութիւնից, մինչեւ արտաքին քաղաքական կողմնորոշմանը վերաբերող պահանջներ, ու քաղաքացիներն իրենք կարող են որոշել՝ շարունակում են պայքարն արդէն քաղաքական հարթութիւնում, թէ՛ ոչ: Բայց, կրկնում ենք, ամենակարեւորը քաղաքական ուժերի ազնուութիւնն է, որը մինչ այս պահը չի դրսևորուած:

րութիւն է քաղաքական ուժերի համար՝ մաքրուելու եւ հասարակութեան հետ ազնիւ լինելու համար:

Հիմա Բաղրամեան պողոտայում կամ Ազատութեան հրապարակում քաղաքականութեան մասին խօսելը գրեթէ հաւասարազօր է սադրանքի: Իշխանութիւնը շարունակում է օգուտներ քաղել այդ «սադրանքից», որը տարածուած է անտեսանելի կերպով, սակայն դա շատ աւելի վտանգաւոր է, քան մնացած ակնյայտ սադրանքները: «168 ԺԱՄ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ
SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսապայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Բաղրամեանում Շատ Շարժումներ են գլխատուել, Բայց Այս Մեկն Անբռնելի է».
Ստյոպա Սաֆարեան

Էլեկտրաէներգիայի սակագ- նի բարձրացման դեմ պայքարող «Ոչ թալանին» շարժումն իշխա- նութիւնների կողմից անբռնելի է: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյ- ցում ասաց քաղաքական վերլուծա- բան Ստյոպա Սաֆարեանը՝ աւե- լացնելով, այնուամենայնիւ, որ շարժումը հետագայ գործողու- թիւնների ծրագիր չունի:



Քաղաքական վերլուծաբան Ստյոպա Սաֆարեան

Շարժումներ էլ գլխատուել են Բաղ- րամեանում», - ասաց նա՝ աւելաց- նելով, որ շարժման ընթացքը փոխեց ոչ թէ ոստիկանութեան սպառնալիքները, այլ նախագահի յայտարարութիւնը, որ 6.93 դրա- մը ժամանակաորակա կտուբի- դաւորուի կառավարութեան կող- մից:

Վերլուծաբանի կարծիքով՝ շարժման հետագայ կարեւորագոյն խնդիրներն են միաւորումն ու գործողութիւնների հետագայ ծրա- գիր մշակելը:

Ստյոպա Սաֆարեանը նաեւ դատաւարտեց Յունիսի 23-ի առա- ւօտեան ոստիկանների բռնի գոր- ծողութիւնները խաղաղ ցուցա- րարների եւ լրագրողների նկատ- մամբ՝ դրանք համարելով անհա- մաչափ եւ անթոյլատրելի:

Վերլուծաբանը վստահ է, որ գոնէ լրագրողների նկատմամբ բռնութիւն գործած ոստիկաններն անպայման կը պատժուեն:

«Այս շարժումը շատ պոզի- տիւ եւ անբռնելի է եղել իշխա- նութիւնների կողմից: Շարժման վրայ ձեռք բարձրացնելը մեծ պրոբլեմ է եղել, շարժումը բռնեյն անհնար է եղել, որովհետեւ այն չունի առաջնորդ եւ լեզուի մէջ է ճանաչուել նոյնիսկ իշխանու- թիւնների կողմից: Բայց հիմա եւ Բաղրամեան պողոտայի հարթակը, եւ Ազատութեան հրապարակի հարթակը տեսանելի անորոշու- թիւն ունեն հետագայ պայքարի առումով»,- ասաց վերլուծաբանը:

Ստյոպա Սաֆարեանի խօս- քով՝ կարեւոր է, թէ շարժումը որտեղ կը շարունակուի՝ Ազատու- թեան հրապարակում, թէ Բաղ- րամեան պողոտայում՝ ընդգծելով, որ Բաղրամեան պողոտան օրեր շարունակ փակելը ոչ թէ շարժման յաղթանակի գրաւականն է, այլ նուաճումներից մէկը:

«Միամիտ պէտք է լինել, որ հաւատալ, թէ տեղը շատ կարեւոր էր շարժման յաղթանակի համար: Տեղը երբեք պէտք չի ֆետիշաց- նել, որովհետեւ երկու տեղն էլ ունեն իրենց առաւելութիւնները եւ իրենց թերութիւնները. ի վեր- ջոյ շատ շարժումներ մարել են Ազատութեան հրապարակում, շատ

Յովիկ Արրահամեանը Անյարմար Դրութեան Մէջ Է Յայտնուել

Էլեկտրաէներգիայի հարցով Սերժ Սարգսեանի հրաւիրած յայտ- նի խորհրդակցութիւնից յետոյ վարչապետ Յովիկ Աբրահամեանն ու կառավարութիւնը մի տեսակ անյարմար վիճակի մէջ են յայտն- ուել: Նրանք չգիտեն՝ ինչպէս բա- ցատրել հանրութեանն ու լրագ- րողներին, թէ որտեղից են գտնելու էլեկտրաէներգիայի 7 դրամ թան- կացումը հատուցելու միջոցները, կամ ինչպէս հիմնաւորեն, որ իրենք մի կողմից համոզուած են, որ 7 դրամ թանկացումը լիովին հիմ- նաւոր է եղել, միւս կողմից էլ համամիտ են նախագահի հետ, թէ կայ արդարացի անվստահութիւն Հանրային ծառայութիւնները կար- գաւորող յանձնաժողովի որոշման հանդէպ:



ՀՀ վարչապետ Յովիկ Աբրահամեան

«Ես կարծում եմ՝ ՀՀ նախա- գահը մանրամասն ներկայացրեց մեր ակտիւիստներին մեր քայլերի մասին, եւ կարծում եմ՝ իրենք պէտք է լինեն բաւարարուած եւ բաւարարուած են: Լուծումը շատ ճիշդ էր, եւ այն երկու անվստա- հութիւնը՝ ընկերութեան նկատ- մամբ եւ յանձնաժողովի նկատ- մամբ, մենք ապագայում կը փոր- ձենք խորհրդատուական ընկերու- թիւնների, աուդիտների միջոցով հանրութեանը մանրամասն տեղե- կացնել եւ հետամուտ կը լինենք, որ դա իրականացուի: Ես կարծում եմ, որ դրանից յետոյ մենք կը խօսենք մեր հանրութեան, մեր հասարակութեան հետ»,- ի պա- տասխան լրագրողների հարցի, յայտարարել է ՀՀ վարչապետ Յո- վիկ Աբրահամեանը:

Յովիկ Աբրահամեանը նաեւ կարծիք է յայտնել, որ ՀՀ-ի ազգայնացման շուրջ քննարկում- ների համար դեռ շատ վաղ է, այս պահին չեն կարող նման քննար- կումներ լինել. «Կը սպասենք

ստուգումների արդիւնքին եւ մենք մեր քայլը, մեր խօսքը ան- պայման կ'ասենք»,- ասել է վարչա- պետը: Աուդիտի հետ կապուած հարցերը, վարչապետի խօսքով, կը կարգաւորուեն Յուլիսին:

Ըստ վարչապետի՝ մինչեւ աուդիտի աւարտը, ՀՀ-ին 7 դրամ թանկացումը հատուցուելու է պե- տութեան կողմից, սակայն ոչ պիտու- ճէի միջոցների հաշուին: Աբրահամ- եանը հրաժարուել է ասել, թէ ինչ արտապիւտեմէտային միջոցների հաշ- ուին է կատարուելու հատուցումը, հարկ է համարել միայն նշել, որ այս մասին կը տեղեկացնի լրացուցիչ:

Յայտնի է, որ պետութիւնը ինչ-որ բանի դիմաց հատուցելու երկու հիմնական ճանապարհ ունի՝ առաջինը պիւտեմէտ է, որից, եթէ հաւատանք Յովիկ Աբրահամեա- նին, ՀՀ-ը ոչինչ չի ստանալու, եւ երկրորդ տարբերակը վարկերն են, որոնց ներգրաւմամբ եւս հնարա- ւոր է այդ հատուցումը տալ: Հնա- րաւոր է, որ Յովիկ Աբրահամեանը չենց այդ՝ երկրորդ տարբերակն էլ նկատի է ունեցել:

Ըստ «Ոչ Թալանին» Նախաձեռնութեան Անդամներին Իրենք Չեն Պառակտուել

«Ոչ թալանին» նախաձեռ- նութիւնը չի պառակտուել: Այս մասին Յունիսի 30-ին, լրագրող- ների հետ զրոյցում ասացին «Ոչ թալանին» նախաձեռնութեան ան- դամները:

«Կարծիքները 2 խմբի բա- ժանուեցին, ցուցարանների մի մա- սը որոշեց մնալ Բաղրամեանում, իսկ միւս մասը իջաւ Ազատու- թեան հրապարակ: Ոչ մի պառակ- տում չկայ, մեր թիմը հիմա ուղղա- կի մի փոքր այլ աշխատանքով է զբաղու», - ասաց նախաձեռնութեան անդամ Արթուր Քոչարեանը:

Նախաձեռնութեան անդամը նշեց, որ ակտիւիստ վաղինակ Շու- շանեանը Բաղրամեան պողոտա- յում փորձեց բացատրել, որ ցու- ցարարների մի մասը մնայ միւս, իսկ այն մասը, որոնք չեն տեսնում իրենց Բաղրամեանում շարունա- կեն իրենց պայքարը Ազատու- թեան հրապարակում, սակայն դա սխալ ընկալուեց շատերի կողմից: «Ոչ թալանին» նախաձեռ- նութեան անդամ Սոֆիա Յովսէ- փաւան էլ նշեց, որ իրենք իրենց պայքարը պէտք է այլ հարթու- թիւնում շարունակեն, քանի որ

Բաղրամեան պողոտայում պայքա- րը արդիւնք չէր տալիս:

«Մենք երկար եղանք Բաղ- րամեանում, սակայն անընդհատ լինել տարածքում բաւական բարդ է, քանի որ այլ տեսանկիւնից չէինք տեսնում շարժումը: Անընդ- հատ փողոց փակելով մենք ար- դիւնքի չենք հասնի, պիտի այլ հարթակում պայքարը լինէր, մեզ պէտք են կոնկրետ մասնագէտների խորհուրդներ, մեզ պէտք է հասկա- նալ ինչ մանիպուլյացիա երկրի ղեկավարը արեց, արդեօք էստեղ կայ որեւէ կառչելու տեղ, թէ սա գուտ աբսուրդ էր», - ասաց նա:

Սոֆիա Յովսէփեանը նշեց, որ իրենք ցանկանում են, որ ժողո- վուրդը որոշում կայացնի, ոչ թէ նախաձեռնութիւնը:

«Մենք պայքարում ենք նրա համար, որ ժողովուրդը որոշի, ժողովուրդն է թալանուած եւ ժո- ղովուրդը պէտք է որոշի իր հե- տագայ քայլը, արդեօք այդ աու- դիտը կը տայ մեզ ինչ-որ արդեօք: Իրականում ստեղծուել էր մի իրավիճակ, որ Բաղրամեանում նստած վիճակում բաւականին լճաց- ուած վիճակ էր», - ասաց նա:

Պատախազութիւնը Հաստատեց՝ Աւետիսեանների Սպանութեան Գործը Կը Փոխանցուի Հայկական Կողմին

Հայաստանի Գլխաւոր Պատա- խազութիւնը պաշտօնապէս յայտա- րարեց, որ Գիւմրիում Յունուարի 12-ին դատան սպանդի ենթարկ- ուած Աւետիսեանների սպանու- թեան գործը ռուսական կողմը եր- կար բանակցութիւններից յետոյ փո- խանցում է հայ իրաւապահներին:

« Ընթացակարգային հարցե- րի կարգաւորումից յետոյ գործը կը փոխանցուի Քննչական կոմի- տէի վարչութիւն», - յայտարարում է դատախազութիւնը՝ ընդգրկելով, որ յստակ ժամկէտներ այս պահին նշել հնարաւոր չէ. - «Սակայն յստակ է, որ սպանութեան գործը

քննելու են Հայաստանի իրաւա- պահները, արդարադատութիւնն իրականացնելու են ՀՀ դատարան- ները, մեղադրանքը պաշտպանելու է գործով հսկողութիւն իրակա- նացնող դատախազը, դատավճիռը կայացուցուել է Հայաստանի Հան- րապետութեան անունից»:

Այն, որ ռուսական կողմը այս հարցում զիջումների է գնում սպա- նութիւնից միայն կէս տարի անց, ամենեւին էլ պատահական չէ, ասում է իրաւապաշտպան՝ որոշ- ման ետեւում տեսնելով նաեւ Երե- ւանում սկսուած ցոյցերի ազդե- ցութիւնը:

«Իշխանութիւնները Պատին Դեմ Առան».- Սերգէյ Մինասեան

Այն, ինչ հիմա տեղի է ունե- նում բողոքի ցոյցերի ժամանակ, հասարակութեան փորձն է իշխա- նութիւններին իրենց քաղաքական ու տնտեսական բողոքը յայտնել: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց Կով- կասի ինստիտուտի փոխտնօրէն Սերգէյ Մինասեանը:

Քաղաքագէտի խօսքով՝ իր գոյութիւնը գրեթէ դադարեցրել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակ- ցութիւնը, եւ Հայաստանում չի մնացել քաղաքական եւ սոցիալ- տնտեսական դժգոհութեան կար- գաւորման որեւէ մեխանիզմ: «Այս- պիսով հասկանալի է, որ նման

իրադարձութիւններ պիտի տեղի ունենան: Իշխանութիւնները, որոնք քայլում էին իրենց համար առաւել հեշտ ճանապարհով, կա- րելի է ասել պատին դեմ առան: Հիմա այնպիսի իրավիճակ է, որ իշխանութիւնները չգիտեն ում հետ խօսեն եւ պայմանաւորուեն: Դա խնդիր է նաեւ ցուցարարների համար, քանի որ ինչ-որ պահի ին- որ մէկի նյարդերը կարող են տեղի տալ: Մենք տեսել ենք, թէ ինչպէս է դա երկուստեք տեղի ունենում», - ասել է քաղաքագէտը:

Հարցին, թէ ինչպէս նա կը բնութագրի հաւաքուածներին, Մի- նասեանը պատասխանեց, որ մար-

դիկ փոխուած են: «Մինչ այս այստեղ ոսկէ երիտասարդութիւն էր, հիմա աւելի շատ սոցիալապէս ցածր խաւի մարդիկ են հաւաք-

ուել, եւ պայքարը կը քաղաքակա- նացուի արդէն աւելի կոնկրետ աշխարհաքաղաքական ձեւակեր- պումներով», - ասաց Մինասեանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԷՑ-ի Դեմ Բողոքի Ալիքը Կարող է Նոր Էջ Բացել Հայ-Ռուսական Յարաբերութիւններում

Որոշ քաղաքագէտների պնդմամբ՝ ռուսաստանեան «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերութեան շուրջ բարձրացած ալիքը կարող է նոր էջ բացել Հայաստան - Ռուսաստան յարաբերութիւններում:

Իրաւապաշտպան Աւետիք Իշխանեանի ձեւակերպմամբ՝ ժամանակն է ազատուել փոքր երկիր լինելու բարդոյթից. - «Ես միշտ հաւատացած եմ եղել, եւ հիմա դա ապացուցուած է, որ փոքր ազգ եւ պետութիւն չկայ: Դու կարող ես ստիպել, որ բոլորը քեզ յարգեն՝ անկախ քո չափից: Դա կախուած է քեզից: Լուծուած հետեւեալն է՝ նախագահի մակարդակով որոշում կայացնել եւ հեռախօսով Ռոբերդ Նազարեանին ասել, որ պէտք է լրացուցիչ նիստ կատարեն եւ հոսանքի սակագինը իջեցնեն: Կ'ունենա՞յ այդքան համարձակութիւն Հանրապետութեան իշխանութիւնը, դեկավարութիւնը հակառակ գնալու, առանց Ռուսաստանի հետ համաձայնեցնելու, յանձնարարական տալու Ռոբերդ Նազարեանին»:

«Հայաստանի երիտասարդութիւնն այսօր ցոյց է տալիս, որ պատրաստ չէ ճորտ լինել եւ իրեն առ հասարակ չի հետաքրքրում, թէ ով է ՀԷՑ-ը կառավարում՝ Հայաստանը, թէ՞ Ռուսաստանը», - վստահեցնում է իրաւաբան Երուանդ Վարդանանը՝ աւելացնելով, թէ իշխանութիւնները պարտաւոր են օգտուել այս իրավիճակից. - «Նման շարժումները իրաւունք չունի նաեւ մեր պետութիւնը ու իշխանութիւնը չօգտագործել՝ պետութեան ինքնիշխանութիւնը ամրապնդելու համար: Որովհետեւ նման շարժումներն են, որ իրեն հնարաւորութիւն են տալիս փորձել խօսել բոլորի հետ հաւասարը հաւասարի նման»:

Փորձագէտների կարծիքով, իշխանութիւններին Ռուսաստանի հետ աւելի անկաշկանդ շփուելու հնարաւորութիւն կը տայ նաեւ առկայիտը:

Քաղաքական վերլուծաբան Յակոբ Բաղալեանը վստահ է՝ թէեւ առկայիտը հասարակութեան բարձրացրած հարցերին պատասխան չի տայ, բայց դրա միջոցով Ռուսաստանն ու Հայաստանը կը փորձեն իրենց ներգրաւուածութիւնն ու պատասխանատուութիւնը կիսել. - «Ես կարծում եմ, սա նաեւ ցանկանում է իմանալ ռուսական կողմը»:

Եւ այդ առկայիտը աւելի շատ հենց այդ ներքին յարաբերութիւնների պարզաբանման նշանակութիւն է ունենալու»:

Իրաւապաշտպանները վստահ են, որ Երեւանում վերջին շաբաթներին տիրող իրավիճակը կարող է անհանգստացնել Ռուսաստանին: Արթուր Սաքունցի կարծիքով, Ռուսաստանը չէր ցանկանայ, որ ՀԷՑ-ի շուրջ բարձրացած բողոքը անդրադառնար հայ- ռուսական յարաբերութիւնների վրայ. - «ՀԷՑ-ի հետ կապուած սակագնի հարցը չնոյնականացուելի ռուսական գործօնի հետ եւ հնարաւորինս չափով հակառուսական բաներ չտայ: Բայց իրապէս հենց ռուսական մամուլը հակառուսական տրամադրութիւնները խորացրեց, եւ սա արդէն շատ աւելի խորը ազդեցութիւն ունի, քան իրենք կարծում են»:

Իսկ Կովկասի ինստիտուտի տնօրէն, քաղաքագէտ Ալեքսանդր Իսկանդարեանը, ճիշդ հակառակը, վստահ է, որ այս ամէնը ոչ մի բիծ չի կարող թողել հայ-ռուսական յարաբերութիւնների վրայ. - «Դա կը տեւի այնքան, ինչքան կը տեւի: Իսկ հայ-ռուսական յարաբերութիւնները, որոնք հիմնուած են աշխարհաքաղաքական հասկացութիւնների վրայ, բոլորովին այլ հարթութեան վրայ են, քան ցոյցերը»:

Իրաւապաշտպաններն եւ քաղաքական վերլուծաբանները, այդուհանդերձ, համակարծիք են մէկ հարցում՝ պատահական չէր, որ Գիւմրիի արիւնալի սպանութիւնների կասկածեալ Վալերի Պերմյա-կովի գործը հայ իրաւապահներին յանձուեց հենց այս օրերին:

Բաղալեանի կարծիքով, հայկական կողմը օգտուեց ռուսական կողմի անհանգստութիւնից. - «Փորձեց բարձրացնել հարցեր, որոնք նախկինում, առանց այդ երեւանեան ֆոնի, հնարաւոր չէր բարձրացնել»:

Ալեքսանդր Իսկանդարեանը, սակայն, յորդորում է «չգերագնահատել այս զիջումը»:

Իսկ Արթուր Սաքունցի կարծիքով, սա պարզապէս անբարոյական առեւտուր էր. - «Շարժումը, աննախադէպ այս ակտիւութիւնը ստիպեց այդպիսի գերտէրութեանը, որը լուրջ սպառնալիք է աշխարհին, հաշուի նստել փոքր Հայաստանի հասարակութեան հետ եւ սկսել Սերժ Սարգսեանի շուրթերով շրջանառութեան մէջ դնել որոշակի խօսակցութիւններ»:

Թուրքիայի Հայ Կին Պատգամաւորը Առաջին Գրաւոր Հարցադրումն Է Ուղղել Դաւութօղլուին

Թուրքիայի գլխաւոր ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան կողմից պատգամաւոր դարձած Սելինա Դոդանն իր առաջին գրաւոր հարցադրումն է ուղղել Թուրքիայի վարչապետ Ահմէտ Դաւութօղլուին:

Ինչպէս տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակօս»-ը, Թուրքիայի խորհրդարանի հայ կին պատգամաւոր Սելինա Դոդանը վարչապետ Ահմէտ Դաւութօղլուին ուղղուած իր գրաւոր հարցադրման մէջ պահանջել է պատասխանել այն պնդումներին, որ վերջին օրերին Սիրիայի քրդաբնակ Քոբանիի խաղաղ բնակչութեան կոտորած կազմակերպած իսլամիստ անարեւելիները Թուրքիայից են ներխուժել:

Հարցադրման մէջ նաեւ շեշտուել է, թէ անհրաժեշտ է տեղեկութիւն հաղորդել, թէ Թուրքիայի ներսում «Իսլամական պետութիւն» հանրապետական խմբաւորման դէմ որեւէ գործողութիւն կատարուել է, քանի՞նք են ձերբակալուել, քանի՞նք դէմ է դատական գործ յարուցուել:

Միւս կողմէ, Թուրքիայի ժողովրդա-դեմոկրատական կուսակցութեան առաջնորդ Քեմալ Քըլըչդարօղլուն երկրի կառավարութեանը կոչ է արել հրաժարուել Սիրիայի հակամարտութեանը միջամտելու պլաններից:

Աւելի վաղ Թուրքական մամուլը, վկայակոչելով ռազմական ոլորտում իր աղբիւրները, յայտ-



Թուրքիայի խորհրդարանի հայ անդամ Սելինա Դոդան

նում էր, որ Թուրքիայի կառավարութիւնը ռազմական միջամտութեան պլան է մշակում՝ Սիրիայի հետ սահմանակից շրջաններում բուֆերային գօտի ստեղծելու եւ Սիրիայի քրդերին իրենց դիրքերն ուժեղացնել թոյլ չտալու նպատակով, քանի որ վերջիններս լուրջ յաջողութիւններ են գրանցել «Իսլամական պետութեան» դէմ պայքարում:

«Ես նախազգուշացնում եմ. Թուրքիային մի՛ ներքաշէք արկածախնդրութեան մէջ: Դա թանկ կարժենայ ոչ միայն արտաքին, այլ նաեւ ներքին քաղաքականութեան համար: Դրա դիմաց կը վճարեն ոչ թէ քաղաքական գործիչները, այլ մարդիկ», - ասել է քաղաքական գործիչը Hürriyet-ին տուած հարցազրոյցի ժամանակ:

Սեյրան Օհանեան Ընդունել է Կլէնտէլի Քաղաքապետ Արա Նաարեանին



Կլէնտէլի քաղաքապետ Արա Նաարեան եւ տիկինը՝ Սեյրան Օհանեանի հետ հանդիպման ընթացքին

Յունիսի 30-ին պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանն ընդունել է ԱՄՆ Կլէնտէլի քաղաքապետ Արա Նաարեանին եւ նրա տիկինը՝ Պալմիրա Նաարեանին: Այս մասին տեղեկացնում է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակացութեան հետ կապերի վարչութիւնը:

Հանդիպման ընթացքում երկուստեք նշուել է համագործակցութեան համար լաւ նախադրեալների առկայութիւնը եւ այս ուղղութեամբ աշխատելու պատրաստակամութիւնը: Արա Նաարեանը պատմել է Կլէնտէլի հայկական համայնքի մասին նշելով, որ

Կլէնտէլի հայերը յարգուած մասնագէտներ են՝ փաստաբաններ, բժիշկներ, գործարարներ եւ այլն: Հայազգի քաղաքապետը նախարարին վստահեցրել է, որ ամուր են պահում կապը մայր հայրենիքի հետ, յատկապէս ուշադրութեամբ հետեւում են պաշտպանական ոլորտին ու գինուած ուժերին առնչուող իրադարձութիւններին:

Նոյն օրը նախարար Օհանեանն ընդունել է նաեւ «Զինուորական բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպութեան հրաւերով Երեւան ժամանած ամերիկահայ բարերարներ Վարդգէս եւ Մերի Նաարեաններին:

Հայ Լինելու Մէջ «Մեղադրուող» Քուրդ Պատգամաւորը Պարզաբանում Է Տուել

Թուրքիայում պատգամաւորների երդման ժամանակ երդման տեքստը փոխած քուրդ պատգամաւոր Մեհմէտ Ալի Ասլանը պարզաբանել է իր «հայ» լինելու մասին պնդումները:

Թուրքական SkyTv կայքի փոխանցմամբ՝ քրդական «Ժողովուրդների Դեմոկրատական» (HDP) կուսակցութեան կողմից պատգամաւոր ընտրուած Մեհմէտ Ալի Ասլանը յայտարարել է, թէ երբ երդման ժամանակ թուրք ազգ ասելու փոխարէն ասել է Թուրքիայի ազգեր, իրեն ասել են հայի թոռ: Նա շեշտել է, թէ այդ խօսքերով փորձել են հայերին նուաստացնել, փորձել են իրեն նուաստացնել:

«Ես հայերի հետ ազգակցական կապ չունեմ: Եթէ հայերի հետ




Քուրդ պատգամաւոր Մեհմէտ Ալի Ասլան

ազգակցական կապ ունենայի, դրանով կը հապարտանայի», - ասել է Մեհմէտ Ալի Ասլանը:

Ս.Դ.Յ.Կ. «ՅԱՅԿ ԲԺՇԿԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Լաս Վեկասի նորահաստատ Հնչակեան կուսակցութեան «Հայկ Բժշկեան» մասնաճիւղի կազմը ամբողջացաւ խումբ մը նորագիրներով: Անոնց երգման արարողութիւնը տեղի ունեցաւ Յունիսի 12ին: Այս առթիւ Մայր կուսակցութեան շարքերը մուտք գործող նորագիրներուն ողջունի ջերմ խօսքերով հանդէս եկան վարիչ Մարմնի ատենապետ Ընկ. Գ. Մոլոյեան եւ Ս.Դ.Յ.Կ. կեդր. վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան: Անոնք ողջունելէ ետք նորագիրներու մուտքը Հնչակեան կուսակցութեան մեծ ընտանիքին ներս, յորդերեցին անշեղօրէն հետեւիլ լուսատու առաջնորդներու գծած ուղիին:



ընկ. Ժօրժ Յակոբեան: Ան շնորհաւորելէ ետք նորագիրներու մուտքը Հայկ Բժշկեան մասնաճիւղէն ներս, յոյս յայտնեց որ իրենց օգտակար ներդրումը կ'ունենան յօգուտ շրջանի հայութեան:

Աւարտին տեղի ունեցաւ ընկերային ճաշկերոյթ պարահանդէս Հայաստանեայց Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Շնորհակալական խօսքով հանդէս եկաւ նորակազմ մասնաճիւղի վարչութեան ատենապետ

«ԱՐԵՎՄՏԱՅԱՅԵՐԵՆԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ» ՆԻԻԹՈՎ ՅԱՄԱԺՈՂՈՎ

Հայաստանի Սփիւռքի նախարարութիւնը եւ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիոյ Հ. Աճառեանի անուան լեզուի ուսումնարանը 29-30 Յունիսին պիտի կայացնեն «Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ» նիւթով համաժողով, որ տեղի պիտի ունենայ ԳԱԱԻ նախագահութեան նիստերու դահլիճին մէջ:

Հայաստանի եւ Սփիւռքի մասնագէտները, մտաւորականները հրաւիրուած են մասնակցելու քննարկումներուն՝ հետեւեալ ուղղութիւններով.

- 1. Արեւմտահայերէնի պահպանութեան, գործառութեան, ուսուցման, կանոնարկման խնդիրներ.

2. Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման խնդիրներ.

3. Հայերէնի առջեւ ծառայած մարտահրաւէրներ:

Համաժողովին մասնակցիլ ուզողները պէտք է իրենց դիմումները յղեն մինչեւ 20 Յունիս՝ հետեւեալ Ե-նամակի հասցէին՝ lingvinst@sci.am:

Համաժողովին մասին յաւելեալ տեղեկութիւն ստանալու համար կարելի է այցելել հետեւեալ կայքերը՝ www.mindiaspora.am, www.hayernaysor.am

ՊՈԼՍՈՅ ԿԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ԴԻՄՈՒՄ՝ ՊՈԼՍՈՅ ՆԱՅԱՆԳԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, Յունիս 25-ին Պոլսոյ Հայոց պատրիարքարանի ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթէշեան՝ Շիրվան քնչ. Միւրզեանի ուղեկցութեամբ, այցելած է Պոլսոյ նահանգապետ վասիլ Ծահինին:

Պոլսոյ Հայոց պատրիարքարանի պաշտօնական կայքը կը հաղորդէ, թէ այցելութեան ընթացքին պատրիարքի փոխանորդը պատրիարքական ընտրութիւններ կազմակերպելու վերաբերեալ դիմում փոխանցած է նահանգապետին:

Ինչպէս յայտնի է, 2010-ին պատրիարքի ընտրութիւններու կազմակերպման համար ներկայացուած էր դիմում մը, որմէ ետք տեղի ունեցած էր պատրիարքի ընդհանուր փոխանորդի ընտրութիւնը:

Տեղի տալով հայկական համայնքի պահանջներուն, պատրիարքի փոխանորդ Արամ արք. Աթէշեան անգամ մը եւս դիմում ներկայացուցած է՝ ականդոյթներու եւ սովորոյթներու համա ձայն պատրիարքական ընտրութիւններ կազմակերպելու համար:

Նստացոյցը Կը Շարունակուի

Շարունակուած էջ 1-էն

Բաղրամեան պողոտայի նստացոյցը եւ զայն տեղափոխել Ազատութեան հրապարակ: Սակայն, ժողովուրդէն շատեր մերժեցին նստացոյցը դադարեցնելու գաղափարը, յայտարարելով թէ բաւարարուած չեն իշխանութիւններու մասնակի նահանջով: «Ոչ Թալանին» շարժումի անդամներու հեռանալէն ետք, հրապարակ եկաւ նոր խումբ, որ կը շարունակէ փակ պահել նախագահական պալատի պողոտան:

Սերժ Սարգսեանի ելոյթէն ետք, Հայաստանի ոստիկանութիւնը պայմանաժամ տալով, յայտարարեց, որ գործողութիւններ պիտի ձեռնարկէ պողոտան բանալու համար: Սակայն, պայմանաժամին յա-

ջորդող օրերուն, որեւէ քայլ չառնուեցաւ իշխանութիւններուն կողմէ եւ այժմ կը տիրէ սպասողական վիճակ:

Բողոքի ցոյցերը համակարգող նոր խումբը, Յունիս 1-ին յայտարարեց որ, պատրաստ չէ ոստիկանութեան հետ բանակցելու՝ նստացոյցը այլ վայր տեղափոխելու հարցով:

Ոստիկանութիւնը, հաւաքը այլ վայր տեղափոխելու հարցով բանակցութիւններու յորդորով նոյն օրը դիմած էր ցուցարարներուն, դարձեալ զգուշացնելով, որ Բաղրամեան պողոտային վրայ մնալու պարագային, «ստիպուած կ'ըլլան ամբողջ ծաւալով գործադրել շէօրէնսըութեամբ իրենց վերապահուած լիազօրութիւնները»:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄԱՍԵԱՆ ԿԱՄԵՐԳՈՎ ԿԱՆԴԵՍ ԵԿԱԾ Է ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ Ս. ԿԻՐԱԿՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ



Ըստ Ermeniha ber.am կայքին՝ Տիգրանակերտի Ս. Կիրակոս հայկական եկեղեցւոյ մէջ համերգով հանդէս եկած է աշխարհահռչակ նշանաւոր ճագային դաշնակահար Տիգրան Համասեան՝ Հայաստանի պետական սենեկային երգչախումբի մասնակցութեամբ:

Համասեան 100 եկեղեցիներու մէջ համերգներով հանդէս կու գայ Թուրքիոյ, Հայաստանի, Վրաստանի, Լիբանանի, Ֆրանսայի, Շուէտի, Պելճիքայի, Չեխիոյ, Բրիտանիոյ, Գերմանիոյ, Լիւքսեմպուրկի,

Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ:

«Լոյս ի լուսոյ» խորագիրով համերգաշարը Արեւմտահայաստանի տարբեր քաղաքներուն մէջ պիտի շարու նակուի մինչեւ 30 Յունիս:

Թրքական «Evrensel» լրատուական կայքին համաձայն՝ Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած համերգին, բացի հայ համայնքի ներկայացուցիչներէն, մասնակցած են նաեւ բազմաթիւ տեղաբնակ քիւրտեր:

ԷԶՄԻԱԾԻՆ

Շահէ Վրդ. Անանեան Նշանակուեցաւ Միջեկեղեցական Յարաբերութեանց Նոր Պատասխանատու

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական յարաբերութիւններու պատասխանատու Յովակիմ Եպիսկ. Մանուկեանի՝ Մեծն Բրիտանիոյ Առաջնորդ նշանակումէն ետք, Շահէ Վրդ. Անանեան անոր կը յաջորդէ այդ կարեւոր պաշտօնին գլուխը:

Երեսուներեքամեայ Շահէ Վրդ. յաջորդաբար եղած է «Էջմիածին» հանդէսի իմբապարպետի տեղակալ, ապա՝ Մայր Աթոռի մամուլ ու հրատարակութիւններու պատասխանատու: Նախքան ստանձնելը այս կարեւոր պատասխանատուութիւնները, Շահէ Վրդ. իր ուսումը ստացած է Փարիզի Կաթոլիկ Հիմնարկին մէջ, 2006-էն 2009: Կատարելապէս ֆրանսախօս, ան նաեւ Հայոց Եկեղեցւոյ ներկայացուցիչներէն մէկն է աստուածաբանական երկխօսութեան՝ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու, Կաթոլիկ Եկեղեցւոյ եւ Անկ լիքան Հաղորդութեան հետ: 2006-ին, Հ. Շահէ Վրդ. Անանեան կը մասնակցէր Փորթօ Ալէկքէի (Պրագիլ) մէջ տեղի ունեցած Միջեկեղեցական խորհուրդի ընդհանուր ժողովին, որմէ ետք



Շահէ Վրդ. Անանեան

2010-ին մաս կը կազմէր անոր «Հաւատք եւ սահմանադրութիւն» յանձնաժողովին: Շահէ Վրդ. ծանօթ դէմք է Փարիզի Մայր Տաճարի ծխականներուն ալ եւ համակրանքը կը վայելէր անոնց՝ այն տարիներուն երբ ան իր ուսման համար կը գտնուէր Փարիզ եւ որուն կը հանդիպէինք ամէն Կիրակի, Ս. Պատարագի առթիւ:

Իսթանպուլի Հայկական Մանկատան Հարցը

Շարունակուած էջ 1-էն

կան մարմիններուն ներկայացուած են: Էրեն Քեսքին շեշտած է, որ Թուրքիա պէտք է յարգէ միջազգային համաձայնագիրները եւ շտապ Քամի Արմէնը վերադարձնէ հայկական եկեղեցիին:

Յայտնենք որ Իսթանպուլի «Քամի Արմէն» մանկատունը 1987-ին գրաւուած էր Թրքական իշխա-

նութիւններուն կողմէ, այնուհետեւ վաճառուած է Թուրք գործարարի մը, որ իր կարգին որոշած է քանդել մանկատունը եւ բարձրաձայր կէտէ կառուցել:

Հասարակական ճնշումներու արդիւնքով մանկատան քանդումը ժամանակաւորապէս դադարեցուած է:

Այս մանկատան մէջ մեծցած է նաեւ Հրանդ Տինք եւ տիկինը՝ Ռաքէլ Տինք:

ՊԱՏՃԱՌ ԵՒ... ԴԵՏԵԻԱՆՔ (Ա.)

ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Նախապես ծրագրուած էր այս յօդուածին մէջ անպայման անդրադառնալ ԵՆԽՎ-ի (Եւրոպայի Խորհուրդի Խորհրդանային Վեհաժողովի) հերթական նիստին, որովհետեւ այստեղ քուէարկութեան պիտի ներկայացուէր՝ «Ատրպէյճանի մէջ ժողովրդավարական ինսթիթիւթիւններու (կառուցներու) գործունէութիւնը» վերնագրով փաստաթուղթը, որ մէկ քանի առումներով շատ կարեւոր էր Հայաստանի ուրեմն նաեւ ամբողջ հայ ժողովուրդի նաժար:

ԵՆԽՎ-ի մէջ քուէարկութեան դրուած էր Մոնիթորինգի (ուսումնասիրութիւն) յանձնաժողովի անդամներ՝ Փետրօ Ակրամունթի, Եւթատէուշ Իւրնաքիի հեղինակած՝ «Ատրպէյճանի մէջ ժողովրդավարական ինսթիթիւթիւններու գործունէութիւնը վերնագրով փաստաթուղթը, ուր կը նշուի թէ Հայաստանը բռնազաւթած է ատրպէյճանական տարածքի մէկ մասը՝ Լեռնային Ղարաբաղը...»

Այն, որ սոյն ձեւակերպումը հեռահար նպատակներ ունէր՝ աւելի քան յստակ է: Անվիճելի է, որ մեր դրացի հանրապետութեան նախնային եւ խաւարային դիւանագիտութեան՝ ճարտարապետները լիաբոլոն «վարձարեցին» Եւրոպական Խորհրդարանի չորս-հինգ տասնեակէ աւելի պատգամաւորներ դասախօսութիւններու, նուէրներու եւ տարատեսակ ճամբորդութիւններու անուան տակ...:

Այդ ուղղութեամբ քննութիւնները դեռ ընթացքի մէջ են, եւ այդ մասին կը գրեն աշխարհի ամենահեղինակաւոր թերթերը: Կը գրեն՝ յենելով ստոյգ փաստերու եւ անաչառ վերլուծութիւններու վրայ, եւ այս հարցին մէջ ամէնէն խոցելի թիրախը վերոնշեալ տիրահազակ պատգամաւորներն են, որոնք, այսուամէնայնիւ, այդ բանաձեւը հասցուցին մինչեւ քուէարկութիւն...:

Գաղտնիք չէ, որ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի ոգեկոչման միջոցառումներու ծիրին մէջ, թուրք-ազերի սերտ համագործակցութիւնը քաղաքական ու տեղեկատուական ծանրածանր պարտութեան մատուցեցաւ: Այդուհետ, ասիկա քաղաքական առաջին ու լրջագոյն հարթակը եղաւ, ուր անոնք միասնական ջանքերով Եւրոպային փորձեցին ներկայացնել մեր «զաւթողական քաղաքականութեան բուն էութիւնը»:

...Քուէարկութիւնը կատար-

ուած է եւ ըստ հայկական կողմի արդարացի պնդումներուն, փաստաթուղթը ընդունուած է որպէս բանաձեւ, ուր բռնազաւթում (occupation) եզրոյթը փոխարինուած է «Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մասին բառերով, այսինքն՝ հայկական պատուիրակութեան ներկայացուցած նախագիծը անցած է ձայներու 85:78 յարաբերակցութեամբ: Հայաստանեան պատուիրակութեան անդամները պարզապէս կը նշեն, որ «Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւն» եզրոյթը կատարելապէս կը համապատասխանէ միջազգային ընդունուած բառապաշարին:

Կասկածէ վեր է, որ շատ շուտով ծայր պիտի առնէ թուրք-ազերի՝ արդէն բոլորը յոգնեցուցած վայնասունը, թէ իբր ամէն ինչի մէջ յանցաւորը «հայկական անաբեկչական համաշխարհային» ուժերն են ու անոնց սատարող միջազգային խոշորագոյն քաղաքական կառույցները...

Այո, պատմութեան անիմանալի կեռամաններուն վրայ պատմութեան անիւր զարմանալի արագ շրջադարձեր կը կատարէ...

Պահ մը գոհունակութեամբ կարելի է ժպտալ, յիշելով թէ տասնամեակներով ինչպէս կը փորձէին մեզ ահաբեկել «թուրքական անպարտելի ուժով», եւ ինչպէս աշխարհաքաղաքական տարատեսակ կեղծոյցներէ կասկածի տակ կը դրուէին մեր ազատագրական պայքարի նուիրական ձգտումները...

Պահ մը նոյնիսկ կարելի էր ինքնաբաւութեամբ տարուիլ եւ քիչ մը մեծամտանալ, ըմբռնելով քաղաքական ու դիւանագիտական մասնակի յաղթանակներուն բերկրանքը, սակայն, ինչպէս երբեմն կը պատահէ՝ «այս անգամ ալ շաբաթը ուրբաթէն առաջ եկաւ...»:

Վերջին օրերուն Երեւանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները ոչ միայն հայաստանեան եւ սփիւռքեան, այլ համաշխարհային լրատուամիջոցներուն ու շաղկապութիւնը Եւրոպական Խորհրդարանէն տեղափոխեցին Հայոց Ոստան, բայց այս անգամ մեզի համար ոչ ցանկալի մեկնաբանութիւններով:

Ելեկտրակառուցութեան վճարի սղաճի դէմ պայքարի ելած երիտասարդներու, նաեւ անոնց սատարող ժողովուրդի հսկայ հատուածի մը եւ ոստիկանութեան պարբերական բախումները, որոնք տեղ-տեղ վերածուցան լուրջ առձակատման՝ դարձան համաշխարհային գրեթէ բոլոր լրատուամիջոցներուն հիմ-

նական նիւթը:

Շատ տխուր է այս ամէնը, եւ այնպիսի տպաւորութիւն ստեղծուած է, կարծես մենք թքած ունինք փիլիսոփայութեան՝ այլեւս բնաւ չվիճակարկող պատճառահետեւանքային կապին վրայ: Կա՞յ արդօք պատճառ, որ հետեւանք չունենայ կամ հակառակը...

Այսինքն, ի՞նչ փիլիսոփայութեան մասին է խօսքը, երբ մենք դեռ պէտք եղածին չափ չենք հասկցած կամ (խօսքը որոշ պաշտօնեաներու մասին է) չենք ալ կարողացած անմահ թումանեանի «Մի կաթիլ Մեղր»-ը...

Առձակատման գործընթացը դեռ կը շարունակուի, իսկ սթափ վիճակագրութեան արձանագրած փաստերը, ցաւօք, մտահոգիչ են՝ հիւանդանոցային վերակենդանացման բաժիններու մէջ մէկ տասնեակի հասնող տուժածներ կան, իսկ ցուցարարները դաժանօրէն ցրող ջրցան մեքենաներուն «քաջագործութիւնները» յայտնուած են համաշխարհային լրատուամիջոցներու կիզակէտին մէջ:

Ոստիկանութեան բարձրաստիճան սպաները լրագրողներուն ներողամտութիւնը կը յայցեն ջարդ ու խուրդ եղած նկարահանող սարքերու համար, եւ այս բոլորէն վերջ կը միանան ցուցարարներուն... ՀՀ Ազգային ժողովի կարգ մը պատգամաւորներ եւ մշակութային գործիչներ, որոնք չես գիտեր ինչու իրենք գիրենք "show business-ի ներկայացուցիչներ" տափալի ու լարծուն անուտով կը նախնորեն կոչել, անոնց եւ ոստիկանութեան միջեւ կը փորձեն իւրօրինակ պատնէշի դեր կատարել: Տիրութիւնն ու ցաւը կը բազմապատկուին, երբ աշխարհաքաղաքական տարբեր կեղծոյցներ անխղճօրէն (թէեւ խիղճը անյիշելի ժամանակներէ ի վեր կապ չունի քաղաքականութեան հետ) կը փորձեն քաղաքականացնել այս խիստ կարեւոր եւ զուտ ընկերային հարցը:

"Associated Press" գործակալութիւնը, օրինակ, կը յայտնէ, թէ Երեւանի մէջ ոստիկանութիւնը ուժով ցրած է ելեկտրականութեան սակագինի բարձրացման դէմ բողոքող ցուցարարները՝ ձերբակալելով աւելի քան 200 մարդ, եւ կարծէս ի միջի այլոց կ'աւելցնէ.

«Յոյցի եւ զայն ցրելու չափանիշերը կ'արտացոլեն վերջին տարիներու ընթացքին Հայաստան տեղի ունեցած ամենալուրջ անկարգութիւնները: Ասիկա լուրջ մտահոգութիւն կը ստեղծէ Մոսկուայի զլխաւորած տնտեսական դաշինքի անդամ երկրի քաղաքական կաշտնութեան շուրջ, մանաւանդ, որ Մոսկուայի Հայաստան տեղակայած

է իր ռազմական կեղծոյցը:

Ռուսական ընկերութիւնները կը դեկավարեն Հայաստանի Հանրապետութեան ամենաարժէքաւոր տնտեսական գոտիները, ներառեալ՝ երկրի ուժանիւթի համակարգը, որու սակագինի անտրամաբանական բարձրացումը ցոյցի պատճառ դարձած է...»:

Չքննարկենք քաղաքական սադրանք յիշեցնող այս յաղորդագրութիւնը: Պարզապէս անհրաժեշտ տեղեկութիւնը չունեցող ընթերցողին ըսենք, որ ռազմակայանը, որու մասին առանց մանրամասնելու կը յիշատակէ գործակալութիւնը՝ Հայաստանի մէջ է անցեալ դարու կէսէրէն ի վեր եւ Հայաստանի անկախ Հանրապետութեան երեք Նախագահներու հրամանագիրներով, ինչպէս նաեւ Ազգային ժողովի վաւերացումով կը կատարէ հայ-թուրքական սահմանի վերահսկման առաքելութիւնը:

Չքննարկենք, քանի որ այս հարցին մէջ իրենց Արեւմտեան գործընկերներէն ետ չմնացին նաեւ ռուսական լրատուամիջոցները, որոնք ուրիշ ձեւով մեկնաբանեցին պատահած բռնութիւնները: Իբրեւ թէ ցուցարարները դանակներով ոստիկաններու վրայ յարձակած, եւ հրապարակը Մայտանի վերածած են (ուքրաինական լեղափոխութեան կամ հակալեղափոխութեան կեղծոյցը) եւ եղածը ամբերիկացիներուն խաղն է...:

Անշուշտ, նոյնիսկ մեծագոյն ցանկութեան պարագային, ամերիկեան հետքի մասին խօսք չի կրնար ըլլալ, որովհետեւ "ՀէՅ" (Հայաստանի Ելեկտրական Ցանցեր) ընկերութիւնը շատոնց կը պատկանի ռուսական կողմին: Անհիմն է նաեւ Հայաստան տեղակայուած ռազմակայաններուն համար մեղադրել այսօրուան ռուսաստանեան իշխանութիւնները, բայց քաղաքականութիւնը իր գրուած ու չգրուած օրէնքները ունի, որոնք չեն խորշիւր կիրառել աշխարհի, առանց բացառութեան բոլոր գերտէրութիւնները:

Անշուշտ «ժողովուրդ-իշխանութիւն» առձակատուումը չի կրնար «զուտ հայկական» երեւոյթ ըլլալ: Փաստ է, որ ամէն օր, աշխարհի բազմաթիւ բարգաւաճ երկիրներու մէջ այսպիսի ցնցումները շատ աւելի... ապարդիւն կ'անցնին:

Այսօր այս կամ այն կողմին ուղղուած մեղադրանքները աւելի քան անիմաստ են: Կասկածէ վեր է, որ խնդիրը աւարտին կը հասնի երկխօսութեամբ ու փոխադարձ գիշումներով, բայց գոնէ հետեւութիւնները ճիշդ ըլլան:

Մար. ք էջ 19


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեցող է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԳՐԻԳ ԳՐԻԳՈՐԵԱՆԻՆ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԱՐԴՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ

Յունիս 15ի Գրքի Գրքագրերանի մասին ետք հազարավոր լրագրողներ ընդգծեցին անոր գարմանահրաշ նուաճումները գործարարական աշխարհին եւ հսկայ աւանդը՝ բարեգործութեան բնագաւառին մէջ: Սակայն, այդ լրագրողները երբեք չէին հանդիպած այս մեծանուն մարդուն, քանի որ ան հազուադէպ հարցազրոյցներ կու տար լրատուամիջոցներուն:

Գրեթէ երեք տասնամեակ աշխատելով Գրքագրերանի հետ՝ որպէս «Լինսի» հիմնադրամի փոխնախագահ եւ Միացեալ հայկական հիմնադրամի նախագահ, կը ցանկանայի իմ անձնական յարգանքի տուրքս մատուցանել այս գթասիրտ ամերիկահայտուն եւ հրաշալի անձնաւորութեան:

Շատ լաւ կը յիշեմ իմ առաջին հանդիպումը Գրքագրերանի հետ: Անիկա տեղի ունեցաւ 1980 աւաններու կէսերուն, Պեվլըրի Հիլզի ճաշարաններէն մէկուն մէջ, հաւաքոյթի մը ժամանակ ունեւոր հայերու փոքր խումբի մը, որ կ'աշակցէր նահանգապետ Ճորճ Տէօք-մէճեանի վերընտրութեան: Ես այնտեղ էի որպէս «Քալիֆորնիա Քուրիըր» թերթի իմբագիր: Երբ մօտեցայ անոր ներկայանալու համար, Գրքագրերան անմիջապէս ճանչցաւ զիս եւ ըսաւ, որ իմ շաբաթական իմբագրականներու մշտական ընթերցողն է: Շատ գարմացալ եւ ինքզինքս շոյուած զգացի...

Գրքագրերանի հետ իմ յաջորդ հանդիպումը կայացաւ Պեվլըրի Հիլզի անոր գրասենեակին մէջ 1989 Նոյեմբեր 1ին՝ Հայաստանի մէջ տեղի ունեցած աւերիչ երկրաշարժէն 11 ամիս անց: Մենք քննարկեցինք հնարաւորութիւնը համախմբելու ԱՄՆի մէջ գործող եօթը մեծ հայկական կազմակերպութիւնները, ներառեալ «Լինսի» հիմնադրամը՝ օղակալ ճանապարհով Հայաստան մարդասիրական օգնութիւն հասցնելու նպատակով: Գրքագրերան առաջարկեց վճարել ճանապարհային բոլոր ծախսերը եւ առատաձեռնորէն խոստացաւ ծածկել ոչ միայն այդ մէկ թուիչքին ծախսերը, այլ «յետագայ բոլոր թուիչքներուն, քանի դեռ Հայաստան օգնութեան կարիք ունի»:

Քանի մը օրուան ընթացքին ծնաւ Միացեալ հայկական հիմնադրամը, որ յաջորդ 25 տարիներուն ընթացքին 158 թուիչքներով եւ 2250 ծովային արկղերով 700 միլիոն տոլար ընդհանուր արժողութեամբ մարդասիրական օգնութիւն ցուցաբերեց Հայաստանին եւ Արցախին:

1998ին Գրքագրերան զիս հրաւիրեց միասին մեկնելու Հայաստան եւ իր այդ առաջին ուղեւորութեան ժամանակ նախագահ Քոչարեանին խոստացաւ յատկացնել 100 միլիոն տոլար (աւելի ուշ զայն բարձրացնելով մինչեւ 242 միլիոն տոլարի), որով կառուցուեցան կամ վերանորոգուեցան թունելներ, կամուրջներ եւ տասնեակ դպրոցներ Հայաստանի ու մէկը Արցախի մէջ, ինչպէս նաեւ հարիւրավոր քիւրմեթր մայրուղիներ, ճանապարհներ եւ փողոցներ, 34 մշակոյթի օճախներ ու խնամարաններ, 3700 բնակարան աղէտի գոտիին մէջ եւ 20 միլիոն տոլարի վարկեր փոքր գործարարութեան համար: Այս ծրագիրները ոչ միայն զգալիօրէն

նպաստեցին Հայաստանի ենթակառուցուածքներու բարելաւման, այլ նաեւ խիստ անհրաժեշտ աշխատատեղեր ապահովեցին 20 հազարէ աւելի աշխատողներու համար: Պարոն Գրքագրերան ինձմէ խնդրեց վերահսկել այս ծրագիրները որպէս «Լինսի» հիմնադրամի փոխնախագահ:

Տարիներու ընթացքին Գրքագրերանի «Լինսի» հիմնադրամը հարիւր միլիոնավոր տոլարներ նուիրեց ամբողջ հայութեան, որոնց շարքին՝ 14 միլիոն տոլար Հայաստանի բնակչութեան 1993ի խստաշունչ ձմրան վառելանիւթով ապահովելու համար, 2006 թուականին 4.5 միլիոն տոլար Լիբանանի բոլոր 28 հայկական դպրոցներուն եւ միլիոնավոր տոլարներ Հայաստան համահայկական հիմնադրամին՝ Արցախի մէջ իրականացուող ծրագիրներու համար: Ըստ հաշուարկներու՝ 1989էն մինչեւ 2011 թուականները ինկած ժամանակահատուածին «Լինսի» հիմնադրամը նուիրած է աւելի քան 1 միլիարտ տոլար՝ հաւասարապէս բաժանուած հայկական եւ օտար բարեգործական կազմակերպութիւններու միջեւ:

Երբ «Լինսի» հիմնադրամը 2011ին փակեց իր դռները, անհիմն եւ կեղծ լուրեր սկսան շրջանառուելու փակման հնարաւոր պատճառներուն մասին: Փաստը այն է, որ պարոն Գրքագրերան նախատեսած էր, որ որոշ տարիքի հասնելով՝ այլեւս պիտի չկարենայ զբաղիլ ամէնօրեայ դիմումներու տարափով, զորս կը ստանար ամբողջ աշխարհէն՝ Ֆինանսաւորման օգնութեան խնդրանքով եւ իր հարստութեան հիմնական մասը բաժնել յետ մահու բաժնելով:

Կը ցանկանայի աւարտել՝ նշելով այս նշանաւոր ամերիկահայու համակրանքներէն եւ հակակրանքներէն քանի մը հատը.

«- Պարոն Գրքագրերան մեծապէս դժգոհ էր ներհայկական պառակտումներէն: Ան անվերջ կը վշտանար, որ հայերը իրարու հետ անհամերաշխ են եւ յաճախ կ'ըսէր. «Ինչո՞ւ չեն կրնար միաւորուիլ ու շարժիլ միեւնոյն ուղղութեամբ»: Ան ուրախ էր, որ ԱՄՆի մէջ գործող եօթը մեծ հայկական կազմակերպութիւնները կ'աշխատին միասին՝ Միացեալ հայկական հիմնադրամի հովանիին տակ:

«- Ան խիստ կը մտահոգուէր Հայաստանի ժողովուրդի թշուառ վիճակով եւ մշտապէս կ'անհանգստանար արտագաղթով: Ան կը ձգտէր աշխատատեղեր ստեղծել, որպէսզի հայերը չլքեն իրենց հայրենիքը:

«- Ան չէր սիրեր ըլլալ ուշադրութեան կեդրոնին եւ երբեք թոյլ չէր տար իր անունով կոչել որեւէ կառույց կամ հաստատութիւն:

«- Ան չափազանց հարուստ էր, բայց շատ համեստ կեանքով կ'ապրէր եւ կը խօսէր մեղմ ու քաղաքավար: Ան կը նախընտրէր, որ մարդիկ իրեն դիմեն անունով՝ Գրքագր, այլ ոչ թէ պարոն Գրքագրերան:

Վերջապէս, ոչ ոք կը չուշէր Գրքագրին գումար նուիրել պատեհ առիթներով: Ան յաճախ իր կամքով մեծ նուիրատուութիւններ կ'ընէր՝ առանց խնդրանքի:

Հայ ժողովուրդը եւ համայն աշխարհը անոր երախտիքի մեծ տուրք ունին մատուցելու:

Պարգումնութիւնը՝ Ռուզմնա Աւագեանի

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՈՒՆՉՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻԿՈՒՆՔԻՆ

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ

Յունիսի 18-20-ը Երեւանում անցկացուեց ՀՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի «Ռոուզ Ռոուզ» սեմինարը, թեմաներից մէկը՝ «Իսլամական պետութեան վերելքը եւ դրա ազդեցութիւնը տարածաշրջանում ու անդին» խորագրով: Հաշուի առնելով ԻՊ-ի վերջին շրջանի առաւել ազդեւոր գործողութիւնները, պիտի ենթադրել, որ տարածաշրջանի համարեայ բոլոր երկրները ռազմահետախուսութեան պոտենցիալ թիրախ են:

ԻՊ-ն իսկապէս լուրջ մարտահրաւէր է, որը չի կարող չանհանգստացնել եւ տագնապի ազդակներ չհաղորդել ողջ աշխարհին, քանի որ սահմանափակուած չէ որոշակի տեղանքով ու սահմանագծերով: ԻՊ-ի մետաստացները տարածուած են ողջ երկրագնդով՝ փորձելով քայքայել ու աղաւաղել առողջ ու տրամաբանականը: Տարբեր տուեալներով խալիֆայութիւն հռչակած տարածքում աւելի քան 30000 զինեալ է կուռում, եւ այս թիւը վերջնական չէ: ԻՊ-ի էմիրները շարունակում են նոր զինեալներ հաւաքագրել, եւ ոչ մի երկիր չի կարող ճշգրիտ նախանշել, թէ իր քաղաքացիներից քանիսն են ահաբեկչական ինտերնացիոնալի շարքերում: Անգամ ԱՄՆ-ին չի յաջողուում վերահսկել իրադրութիւնը:

Վիճակն առանձնապէս լարուած է Միջին Ասիայում: Գրոհայինները, նկատի ունենալով այդ երկրների հիմնական գանգուածի դաւանանքը, իրենց կարեւորագոյն յաղթանակների շարքին են դասում նրանց ներգրաւումը մեծ խալիֆութեան մէջ: Ուստի փորձագէտները հաւանական են համարում ռազմական ասպատակութիւնների տեղափոխութիւնը միջինասիական տարածաշրջան, որի հետեւանքները, բնականաբար, կործանարար կարող են լինել արդէն այդ երկրների սահմաններից շատ աւելի հեռու, այդ թւում եւ Հայաստանի համար, հաշուի առնելով, որ Տաջիկստանը, Արզաստանը ու Ղազախստանը Հայաստանի հետ ռազմական միեւնոյն դաշինքի մէջ են:

Խնդիրն առաւել բարդ է նրանով, որ հիմնականում իսլամ դաւանող այս երկրներում չափազանց շատ են ԻՊ-ի գաղափարների հետեւորդները: Որոշ քաղաքագէտների կարծիքով, Իսլամական պետութիւնը շուտով կարող է շնչել նաեւ Հայաստանի թիկունքին, ինչն ամէնից առաջ պայմանաւորուած է Ատրպէյճանում տիրող իրավիճակով: Լրատուամիջոցները պարբերաբար տուեալներ են ներկայացնում ազգերի ահաբեկչների, այդ երկրում գործող ԻՊ իմբաւորումների եւ, դրանով պայմանաւորուած, երկրի լարուած մթնոլորտի մասին: Պարբերաբար է նաեւ ազգ-

րի գոհերի մասին լրատուութիւնը:

Այդուհանդերձ, թէեւ այդ երկրի իշխանութիւնների ջանքերին, շարունակուած է նոր զինեալների հաւաքագրումը: Վտանգն այն չէ, որ բազմաթիւ ազգերին են ընդգրկուած ԻՊ-ի գորամիաւորներում, այլ, որ նրանցից շատերը վերադառնում կամ պատրաստուած են տուն վերադառնալ նոր ահաբեկչութիւններ կազմակերպելու, անհաւատներին ոչնչացնելու, յեղափոխութիւններ իրականացնելու եւ ԻՊ-ի սահմաններն ընդարձակելու համար, քանի որ դա է նրանց «առաքելութեան» իմաստը:

ՀԳՄ քարտուղար՝ Պետրոս Դեմիրճեանը բացման խօսքում ընդգծեց, որ 1893-1896, 1915-1923 թթ. ցեղասպանութիւնները վկայում են, որ թուրքական ոճրագործութիւնները պետականօրէն ծրագրուած քաղաքականութիւն էր՝ իրագործուած Համիդեան թուրքիայի, այնուհետեւ երիտթուրքերի, քեմալականների կողմից: Ըստ նրա՝ ցեղասպանութեան խնդիրը միայն տարհանումներով, ջարդերով եւ ֆիզիքական իմաստ ունեցող գործօններով չի սահմանափակուում, ներառուում է նաեւ մշակութային ոլորտներ, գենոֆոնդի խնդիրներ. «...որոնք այսօր պիտի կարողանանք շատ լաւ ուսումնասիրել, հետազօտել եւ լուծել՝ մեր ապագայի տեսլականներից ելնելով: Այդ պատճառով ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը նշանակում է ոչ թէ եզրափակիչ հանգրուան, այլ՝ նոր սկիզբ», - ասաց նա:

Արեւմտահայ հարցերի ուսումնասիրութեան կենտրոնի տնօրէն, բան. գիտ. թեկնածու Հայկազուն Ալվրցեանը «Կրօնափոխ հայերի խնդիրը թուրքիայում» խորագրով զեկոյցում նշեց, որ հետագօտութիւնները ցոյց են տուել, որ այսօր կայ Արեւմտեան Հայաստան՝ բնակեցուած տարբեր շերտերի՝ կրօնական, դաւանաբանական, ազգային պատկանելութեան տարբեր պիտակներ վերցրած հայերի խմբերով: Պարզուել է, որ իսլամացած հայերի երկու հիմնական գանգուած կայ: Մի խումբը, որ դաստիարակուել է թուրքերի, քրդերի ընտանիքներում, հաշտուել է իր ճակատագրի հետ եւ չի ուզում խօսել իր հայ լինելու մասին. նրանց թիւը մօտաւորապէս 1.5 մլն է: Միւս հիմնական խումբը ծպտեալ հայերն են, ովքեր իրենց կենցաղում ապրում են որպէս հայ՝ պահպանելով հայկական ավանդութիւնները, իսկ արտաքին միջավայրում թուրք են կամ քուրդ: Ըստ Ալվրցեանի՝ Արեւմտեան Հայաստանի տարածքում հայերի ընդհանուր թիւը մօտ 3.5 մլն է՝ չհաշուած համընթացայերին:

Ի՞նչ խորհրդարանի պատգամաւոր, պատմ. գիտ. թեկնածու Կարէն Խանլարեանը «Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները թուրքիայում» զեկոյցում ընդգծեց, որ Օսմանեան կայսրութեան մէջ Սուլթան Սելիմ 1-ի ժամանակներից սկսած՝ հայերի եւ միւս էթնիկական խմբերի իսլամացման քաղաքականութիւնը եղել է պետական ռազմական նշանակութեան գործընթաց: Եւ դա եղել է իսլամացման առաջին փորձը: Երկրորդ փորձը կատարուել է Համիդեան ջարդերի ժամանակ՝ 1894-96 թթ., երրորդը՝ Ադանայի ջարդերի, Մեծ Եղեռնի ժամանակ: 2-րդ համաշխարհային պատերազմի ընթացքում մշակուած հարկային քաղաքականութեան շնորհիւ է տեղի ունեցել իսլամացման չորրորդ փորձը, որը կոչուում էր ունեւորութեան տուրք կամ հարկ: Այդ օրէնքի հիման վրայ հայերից աւելի շատ՝ 120 տոկոս եկամտահարկ էր գանձուում, ինչը իսլամաց-

ման նոր ալիք էր, որի իրական չափը յայտնի չէ: Կ. Խանլարեանի հաւաստմամբ՝ այսօր Արեւմտեան Հայաստանի տարածքում ապրում են էթնիկապէս անորոշ ծագումով մարդիկ, որոնք ծագումնաբանօրէն, էթնիկական գիտակցութեան տեսակէտից աւելի մօտ են հայութեանը:

Հրապարակախօս Մարի Բարսեղեան-Խանջեանը «Մուսուլմանացած հայերի եւ այլազգիների զարթօնքը թուրքիայում» յօդուածում ներկայացրեց 3 կէտից բաղկացած մի ծրագիր, ըստ որի անհրաժեշտ է՝ 1. ստեղծել կայքէջ, որտեղ կը ներկայացուի հայ ժողովրդի ծագումը, տեղեկութիւն կը հաղորդուի նրա մարդաբանական տեսակի, պատմական ուղու, մշակոյթի, պատմութեան մասին: 2-րդ կայքէջը տեղեկատուութիւն կը հաղորդի թուրք-սելջուկներին ծագման, նրանց մարդաբանական տեսակի, պատմութեան, նրանց կատարած բարբարոսութիւնների մասին: 3-րդ կայքէջը «Արդեօ՞ք մենք թուրք ենք» վերտառութեամբ, կը ներկայացնի պատմութիւններ ծպտեալ հայերի մասին, հնարաւորութիւն տալով իրենց արմատները գտած մարդկանց ինքնաբացայայտուելուն: «Լազարեան ինստիտուտ» գիտակրթական ՀԿ-ի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու Թեհմինէ Մարտոյեանը «Չմիւռնիայի հայ եւ յոյն բնակչութեան բնաջնջման սպառնալիքի ժխտման հետեւանքները» զեկոյցում նշեց, որ 1922թ. Սեպտեմբերին Չմիւռնիայում քրիստոնեայ բնակչութեան բնաջնջման յանցաւոր ծրագիրը մշակելիս, որպէս իրենց գործողութիւնների ապահովման եւ աւարտին հասցնելու երաշխիք, քեմալականները շահարկել են հոգեբանական տարբեր գործօններ, որոնցից ամենապարզունակը՝ քրիստոնեայ բնակչութեանը յանկարծակիի բերելն էր: Այսինքն՝ քաղաքի քրիստոնեայ բնակչութիւնը լայն առումով չպէտք է հաւատ ընծայեր առաջիկայ կոտորածի սպառնալիքին եւ առաւել եւս ցանկութիւն դրսեւորէր մասնակցելու տեղի ունեցող եւ արագօրէն ծաւալուող յանցագործութիւնների խոչընդոտմանը: Չմիւռնիայի հայերն ու յոյներն անտեսում էին իրենց բնաջնջմանը վերաբերող բոլոր նախագրուչացումները, դրանք համարում ստացող տեղեկութիւններ եւ ապաւինում քաղաքում տեղակայուած եւրոպական պետութիւնների ներկայացուցիչների համոզիչ յորդորներին, ըստ որոնց՝ վախենալու կարիք չկար, կոտորած չէր կարող տեղի ունենալ, քանի որ բոլոր քրիստոնեաներն իբր պաշտպանուած էին, եւ այլն: Սակայն Չմիւռնիայի հայերի եւ յոյների համոզմունքը, որ իրենց հետ որեւէ աղէտալի բան տեղի չի ունենայ, կատարելապէս հիմնադուրկ էր: Տասնեակ հազարաւոր անմեղ յոյներ եւ հայեր դարձան քեմալական վարչակարգի ցեղասպան քաղաքականութեան զոհ:

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող Անահիտ Աստոյեանը «Հայերի ունեւորելում Օսմանեան կայսրութիւնում» զեկոյցում նշեց, որ արդիւնաբերական արտադրութեան եւ բանկային գործերում արեւմտահայ առեւտրական

Շաբ.բ էջ 17

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԻՆՉՈՒ ՆԱՐԵԿԱՑԻՆ, ԵՒ ԻՆՉՈՒ ԻՅՄԱ ՀՐԱՉԵԱՅ ԹԱՄՐԱԶԵԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

«Առաջին լրատուական»-ի գրուցակիցն է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Հրաչեայ Թամրազեանը: Հարցում.-Պարոն Թամրազեան, վատիկանում Դոմինի պապի կողմից Գրիգոր Նարեկացին Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած պատարագին Տիեզերական եկեղեցու վարդապետ հռչակուեց: 35 տիեզերական վարդապետների կողքին 36-րդը Նարեկացին է: Ինչո՞վ է առաճաճում Գրիգոր Նարեկացին, ո՞րն է նրա ֆենոմենը, եւ ինչո՞ւ հենց Նարեկացին ընտրուեց:

-Նարեկացին նախ մեծ աստուածաբան, փիլիսոփայ է եւ հսկայ քայլեր է արել նաեւ աստուածաբանութեան մէջ: Նրա բանաստեղծութեան ինքնին աստուածաբանութեան շարունակութիւնն է կամ հենց ինքնին աստուածաբանութիւնն է, քանի որ նրա ամէն մի գործ ուղղակի առնչակցում է աստուածային ոլորտների հետ: Ինքն այդ ներշնչանքով է արարում ու գրում եւ դրա մասին շատ է խօսում իր Մատենանում: Անմիջական հաղորդութեան մէջ է եղել Աստու հետ եւ իր Մատենանը, ինչպէս նաեւ միւս ստեղծագործութիւնները համարում է աստուածային ներշնչանքի ոչ միայն արդիւնք, այլ Աստու հետ համատեղ, համաշունչ է արարում իր Մատենանը:

Այսինքն՝ այդ յղացման պրոցեսին մասնակցում է նաեւ Սուրբ Հոգին, մասնակցում է նաեւ Աստուած: Նա շատ է խօսում նաեւ իր տեսիլների մասին՝ համարելով, որ իր տեսիլները (իսկ յայտնի է, որ նա տեսիլք է ունեցել, Աստուածամօրն ու Քրիստոսին է տեսել, դրա մասին խօսում է Մատենանում) համարում է իր կենսագրութեան կարեւոր կիզակէտը: Դրանք ցնցող փաստեր են: Եւ մի տեղում բացայայտում է իր ստեղծագործութեան խորքերն այսպէս. «Ես իմ տեսիլքների առաջ աւելի եմ պատասխանատու, քան ողջ Աւետարանի առջեւ»: Սա, իհարկէ, միջնադարի համար ցնցող բացատրութիւն է եւ նշանակում է, որ անմիջական կապից բացի, նա արարում է նաեւ էքստազի՝ յափշտակութեան մէջ: Այսինքն՝ նրա յայտնատեսական բանաստեղծութիւնը ոչ միայն սկիզբ ունի, այլեւ ընթացք, անընդհատ յայտնատեսութեան արդիւնք է: Այդ պատճառով նրա բառերը, պատկերները սոսկական պատկերներ չեն, դրանք նրա համար հոգեկիր էութիւններ են: Պատահական չէ, որ նա ստեղծում է բոլորովին նոր բառաշխարհ՝ բառ-բանաստեղծութիւններ: Հազարաւոր նորաստեղծ բառեր ունի, նորաբանութիւններ, որոնք ամէն մէկը այնպիսի խտացումներ են, որ մեծածաւալ քերթուածքների արժէք ունեն: Եւ բնաբանների արժէք ունեն հետագայ ստեղծագործութիւնների համար:

Հարցում.-Նարեկացուն Տիեզերական վարդապետ հռչակելը մէկ օրուայ եւ մէկ տարուայ գործընթաց չէր եւ ոչ էլ պայմանաւորուած էր 100-ամեայ տարելիցի միջոցառումներով:

-Այդ գործընթացը սկսուել է վաղուց: Հաստատապէս կարող եմ ասել, որ Մատենանի 1000-ամեակի արարողութիւնների ընթացքում արդէն նախանշուեց, հիմնաւորուեց այս գործընթացը, եւ հայագէտները, նարեկացիագէտները մե-



ծապէս նպաստեցին այս գործին, յատկապէս հայր Լեւոն Զեքեանը եւ Ժան Փիէռ Մահէն: Հսկայ աշխատանք կատարեցին այս ասպարէզում կազմակերպչական, ոչ միայն որպէս նարեկացիագէտներ. կազմակերպեցին միջազգային գիտաժողովներ, հրատարակութիւններ, թարգմանութիւններ, վերջապէս ներկայացրին այդ ամէնը համապատասխան առեւտրային: Այնտեղ կան եւ՝ յանձնաժողովներ, եւ՝ համաժողովներ: Այս ամէն ինչն արուել է եւ այդ բոհով անցել: Սա կարող էր եւս մի քանի տարի տեւել, եւ Ֆրանցիսկոս պապի կամօք այս գործընթացն արագացուեց: Եւ շատ լաւ է, որ արագացուեց:

Հարցում.-Բայց գործընթացը սկսուել է նախորդ պապի օրօք:

-Այո: Հարցում.-Պատահական չէ՞, որ շատ յաճախ հենց վերածնունդը Նարեկացիով են շատերը պայմանաւորում եւ սկսում:

-Դա ճշմարտութիւն է, քանի որ Նարեկացին կանխել է վերածնունդը, Հայկական վերածննդի ամենախոշոր դէմքն է Նարեկացին, եւ ես կ'ասեի, որ նա ոչ միայն վերածնունդն է կանխել, այլեւ նոր շրջանի եւ՝ գրականութիւնը, եւ՝ աստուածաբանութիւնը, եւ՝ փիլիսոփայութիւնը իր ստեղծագործութիւններով. հիմա նա ամենաարդիական բանաստեղծն է ինձ համար, քանի որ նրա ամբողջ ստեղծագործութիւնը նորարարութիւն է, եւ ժամանակի հոլովոյթի մէջ ամէն անգամ շարժուող ընթացք է նրա բանաստեղծութիւնը եւ նորովի է վերաիմաստաւորուում: Ամէն անգամ կարգալիս դու չես կարողում նոյն բանաստեղծութիւնը, դու կարողում ես այլ բանաստեղծութիւն, քանի որ այդ ընթացքը չի դադարում: Այսինքն՝ անընդհատ յղացման մէջ է նրա բանաստեղծութիւնը, աստուածային հիւսուածք է: Միշտ վերընձիւղուում է հայ կեանքի, քրիստոնեայ կեանքի հետ եւ նորանոր ճիւղաւորումներ տալիս: Այդպէս են հանձարեղ բանաստեղծները եւ նրանց ստեղծագործութիւնը ոչ թէ անկենդան է դառնում, այլ զնալով աւելի ներքուստ պայծառանում է եւ վերաիմաստաւորում ու նորանոր խորքերով ու ծալքերով ի յայտ գալիս:

Հարցում.-Այսինքն քաղաքակրթական շատ կարեւոր նշանակութիւն ունի Նարեկացին անգամ 10 դար յետոյ:

-Միանշանակ, եւ էլի կը մնայ ամենաարդիական բանաստեղծներից մէկը, եւ պատահական չէ, որ այդ բացայայտումն էլ է անուծ իր Մատենանում, որ այդ Մատենանի յարակալութեամբ ինքը կը մնայ

Շաբ.բ էջ 17

ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՀՈՒՆՁՔԸ



ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Շրջանի մը աւարտը միշտ սկիզբն է տարբեր շրջանի մը, նաեւ հիմն ու արմատներն են նոր սկիզբ առած երթին, որ հիմնաւորուած կ'ըլլայ նախորդով: Այս էր պարագան երեսնամեայ երիտասարդ Հայ Քոյրերու Վարժարանի 2014-2015 ուսումնական տարեշրջանի աւարտականներուն, որոնք ամբողջացնելով իրենց նախակրթարանի եւ միջնակարգի ութը տարիները՝ վկայուելով համապատասխան վկայականներով մուտք պիտի գործեն տարբեր երկրորդական վարժարաններ, ուր սկիզբ կ'առնէ անոնց կեանքի յաջորդ ուսումնական երթը:

Այս մեկնակէտէն, Հայ Քոյրերու Վարժարանը իր միջնակարգի աւարտական հանդէսը ունեցաւ Կիրակի 14 Յունիս 2015-ի յետմիջօրէին վարժարանի Դանիէլեան սրահէն ներս:

Սակայն Հայ Քոյրերու Վարժարանին յատուկ է՝ շրջանաւարտ դասարանը նախքան իր աւարտական հանդէսը ունենայ իր վերջին աշակերտական պատարագը, վեր առաքելու իր գոհաբանական աղօթքը եւ փառք տալու Աստուծոյ աւելի քան տասնամեակ մը վայելած ամէն տեսակի բարիքներուն համար:

Արդարեւ, Կիրակի, 7 Յունիս 2015-ի առաւօտեան, Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին ցնծաց, երբ Հ.Ք.Վարժարանի հունձքը նուիրաբերուեցաւ խորան. անոնք իրենց շրջանաւարտութեան տարագներով՝ առաջնորդութեամբ Կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդապետ Հայր Անտոն Նորատունկեանի, Տնօրէնութեան, ուսուցիչներու եւ դպիրներու շարականներու երգեցողութեան ներքեւ մուտք գործեցին տաճար, ուր հաւատացեալներ եւ ծնողներ, գոհունակութեան եւ փառաբանութեան զգացումներով լի կը սպասէին զիրենք անհամբեր:

Աշակերտները մասնակցեցան Ս. Պատարագին, որուն դիտաւորութիւնը յատկապէս աւարտական աշակերտներն էին: Օրուան պատարագին էր ժողովրդապետ Հայր Անտոն Նորատունկեան, որ քարոզը հասցէագրեց շրջանաւարտներուն գասնաք խրատներով ապագայ յաջողութիւններու հեռանկարով, վստահեցնելով որ անոնք արդէն իսկ զին-

ուած են դէպի յաջողութեան երկնակամարներ իրենց թռիչքը ապահովող երկու թեւերով՝ քրիստոնէական կրօնքով եւ Ազգային գիտակցութեամբ: Աշակերտներու կողմէ իրենց սրտի խօսքը կարգացին Անգլերէն լեզուով՝ Միշէլ Քիւրքեան, իսկ Հայերէն՝ Դալար Պզտիկեան, որոնք երկուքն ալ իրենց աղօթքները վերառաքեցին առ Աստուած գոհունակութիւն յայտնելով անոր տուած բոլոր բարիքներուն եւ խոստանալով հաւատարիմ մնալ կրօնքին, ազգին եւ հայրենիքին: Աստուածաշունչի ընթացողութեանը կարգացին հայերէն լեզուով՝ ձորձ Թերզեան եւ անգլերէն՝ Ալին Քէշիշեան: Նաեւ այս յատուկ առիթով չորս աշակերտներ՝ Մեղեղի Տէր Պողոսեան, Թալին Ղազարեան, Սուզաննա Ֆունձեան եւ Փաթիլ Լապէճեան կարողացան իրենց աղօթքները երկինք ուղղեցին իրենց խնդրանքները հայցելով Աստուծոյ օրհնութիւնն ու օգնութիւնը եկեղեցւոյ սպասարկուներուն, ծնողներուն, անձնուրաց քոյրերուն եւ ուսուցիչներուն:

Յուզումնալից արարողութեան աւարտին ծնողք, աշակերտ, դաստիարակ, հոգեկան մեծ բաւարարութեամբ վերադարձան տուն՝ կրկին հանդիպելու յաջորդ կիրակի, Աւարտական պաշտօնական հանդիսութեան:

Յետ Պատարագի Վարժարանի Տնօրէնութիւնը կողիկ հիւրասիրութեամբ մը եկեղեցւոյ Գոլյումձեան սրահէն ներս սիրոյ սեղանի շուրջ բոլորեց հիւրերն ու ծնողները մինչ շրջանաւարտները մեծ ուրախութեամբ յիշատակելի պահեր կ'ապրէին:

Կիրակի, 14 Յունիս 2015-ի յետ միջօրէին, Հայ Քոյրերու Վարժարանի 2014-15 տարեշրջանի շրջանաւարտները ունեցան իրենց պաշտօնական հանդէսը՝ Վարժարանի Դանիէլեան սրահէն ներս, այս անգամ իրենց երախտագիտութիւնը յայտնելու Հ.Ք.Վարժարանի ընտանիքին եւ վկայականները առնելով մեկնելու տարբեր վարժարաններ հետապնդելով իրենց երազներու իրականացումը:

Հանդիսութեան ներկայ էին՝ Առաքինազարդ Քոյրեր, ուսուցիչներ Ջիւրեր, ծնողներ եւ հոծ բազմութիւն: Շրջանաւարտներու կողմէ Տէրունական աղօթքի

ապա հայկական եւ ամերիկեան քայլերգներու մեկնաբանութեամբ հանդիսութիւնը սկիզբ առաւ եւ շարունակուեցաւ պաշտօնական խօսքերով ներկայացուած՝ Տնօրէնուհի Քոյր Լուսիայի, դաստիարակներ՝ Լինտա Գանտիլեանի եւ Ուիլիամ Պասէթի կողմէ, իսկ աշակերտներու կողմէ ուղերձ արտասանեցին Հայերէն լեզուով՝ Ալիք Մալաքեան եւ անգլերէն՝ Արլին Օհանեան, նախագահական մրցանակը ստացող էլիզապէթ Հովակիմեան կարգաց իր սրտի խօսքը, ապա աշակերտական խորհուրդի ատենապետուհի շրջանաւարտ Ալիք Տէր Պերտրոսեան կարգաց նոյն տարուան ընթացքին իրենց իրագործած իրագործումներու մասին եւ իր պաշտօնը հանգամանօրէն, ի բացակայութիւն յառաջիկայ տարուան նորընտիր ատենապետ Նարեկ Քիւրտեանին, փոխանցեց փոխատենապետ՝ Նոյ Շաթոյեանին: Հանդիսութիւնը շարունակուեցաւ Հայերէն եւ անգլերէն արտասանութիւններով եւ խմբերգներով, որուն դաշնամուրով կ'ընկերակցէր վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի՝ Վարդուհի Պաղտասարեան: Հանդիսութիւնը համեմուեցաւ Ալիք Մալաքեանի դաշնամուրի վրայ ներկայացուցած Արնօ Պապաճանեանի զեղեցիկ երաժշտութեամբ, ապա գնահատագրեց յանձնուեցան արժանաւորներուն:

Հանդիսութեան հիւր բանախօսը, որուն ներկայացուց Տիկին Արմինէ Շէրիքեան՝ Տիկին Մէրի Աշճեան Գանտիլեանն էր, Վարժարանի 1998 տարեշրջանի շրջանաւարտներէն, մանկավարժութեան եւ դաստիարակութեան մէջ մասնագիտացած՝ Masters degree in education with emphasis on curriculum of instruction, and in progress doctoral degree in educational leadership՝ Ներկայիս ֆինիքս համալսարանի մէջ կը վարէ կրթական խորհրդատուի պաշտօն: Մէրի Աշճեան Գանտիլեան հաճելի ձեւով ներկայացուց իր զգացումները՝ դարձեալ իր միջնակարգ վարժարանին մէջ գտնուելուն եւ իր հին ուսուցիչներով շրջապատուած ըլլալուն համար, ապա հետաքրքրական ձեւով սկսաւ իր խօսքը ուղղուած աշակերտներուն, եւ հրաւիրեց զիրենք որ յոտնկայս ծափողիւններով շնորհակալութիւն յայտնեն իրենց անմիջական շրջապատը եղող եւ զիրենք խնամող ծնողներուն եւ ուսուցիչներուն, ինչ որ գոհունակութեան զգացում յառաջացուց ներկաներու հոգիներուն մէջ: Մէրի իր պարզ եւ ամփոփ խօսքով աշակերտներու ուշադրութիւնը կեդրոնացուց քանի մը անհրաժեշտ եւ կենսական կէտերու վրայ, որոնք աշակերտներու ապագայ կեանքի յաջող ընթացքի գրաւականներն են եւ եզրակացուց ըսելով՝... երբեք չմոռնալ Հ.Ք. Վարժարանի հինական դաստիարակութիւնը հանդիսացող քրիստոնէական կրօնքը, կառչած մնացէք անոր եւ Աստուծոյ գոհունակութիւն յայտնեցէք ամէն վայրկեան եւ ձեր ունեցած ամէն բարիքներուն համար... Շրջանաւարտներու դէմքին փայլքն ու ժպիտը կը փաստէր որ պատգամը հասած էր իր նպատակակէտին:

Նախքան վկայականներու բաշխումը 2 շրջանաւարտներ՝ Ռիթա Պետրոսեան եւ Շիրակ Իսթամպուլեան կարգացին վար-

ժարանէն ներս աւելի քան տասը տարիներու իրենց յիշատակները հաճելի եւ ուրախ դէպքեր պատմելով:

Հանդիսութեան աւարտին աշակերտները իրենց վկայականները եւ նուէրները ստանձնելէ ետք՝ երբ Տիկ. Արմինէ Շէրիքեան յայտարարեց եւ գոչեց աւարտականները՝ 2015 տարուան Շրջանաւարտներ, անոնք ծափողջոյններու եւ ուրախութեան բացականչութիւններու ընդմէջէն մէկ կողմ նետեցին իրենց գլխարկները եւ արդէն անցան Հայ Քոյրերու Վարժարանի շրջանաւարտներու հոյլին:

Սակայն հանդէսը չէր աւարտած կար մեծ անակնկալ մը, Վարժարանի Տնօրէնութիւնը գեղեցիկ մտալոյցով ունեցած էր պատուելու նախակրթարանի հայերէն լեզուի դասատուներէն Օր. Մարի Թիւթեանը գնահատելով իր 25 տարուան անսակարկ աշխատանքն ու ծառայութիւնը: Մեծարեալին ներկայացուց վարժարանի հայերէն լեզուի ուսուցչուհի Լինտա Գանտիլեան նախ հակիրճ ձեւով տալով թիւթեանի կենսագրական գիծերը, ապա վեր առնելով անոր նուիրումը որպէս մատղաջ սերունդներ դաստիարակելու աստուածահաճոյ աշխատանքին յաւիտենական նուիրեալ նաեւ որպէս անսակարկ ծառայող միութենական միշտ կիզակէտ ունենալով հայ լեզուն, մշակույթն ու ժողովուրդը : Այս առիթով Վարժարանի տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա մեծարեալին յանձնեց 25 տարուան աշխատանքը հաստատող գնահատագիր մը:

Նաեւ ծաղկեփունջեր յանձնուեցան Տիկիններ Մէրի Գոլյումձեանին եւ Արմինէ Շէրիքեանին, առ ի գնահատանք վարժարանէս ներս ունեցած իրենց քսան տարուան ծառայութեան:

Կը շնորհաւորենք Մշակները, որոնք իրենց կեանքի կարեւոր մէկ մասը նուիրած են մատղաջ սերունդի դաստիարակութեան ազնիւ եւ պատասխանատու աշխատանքին, եւ որ արժանի է ամէն մեծարանքի:

Վկայեալներու, պարգևատրուողներու, ծնողներու եւ պատասխանատուներու ուրախութիւնը շարունակուեցաւ Տիւրքա ճաշասրահէն ներս շքեղ ընթրիքով, պարերով եւ ճոխ երաժշտութեամբ:

Հայ Քոյրերու Վարժարանի 2014-2015 ուսումնական տարեշրջանը այսպիսով վերջ գտած էր, աւելցնելով վարժարանի պատմութեան վրայ տարի մը եւս իր յաջողութիւններով եւ նուաճումներով:

Կը շնորհաւորենք բոլոր նուիրեալները, որոնք անսակարկ իրենց աշխատանքը նուիրաբերեցին գիտութեամբ եւ դաստիարակութեամբ զինուած պատուաբեր սերունդ մը պատրաստելու: Կը շնորհաւորենք ծնողները, որոնք ոչ մէկ ջանք ինայցեցին իրենց զաւակներու դաստիարակութեան համար, նաեւ կը շնորհաւորենք եւ յաջողութիւն կը մաղթենք շրջանաւարտներուն, որոնք պիտի ըլլան Հ.Ք.Վարժարանի դեսպանները իրենց գացած իւրաքանչիւր երկրորդական վարժարանէ ներս: Շնորհակալութիւն բոլոր նուիրատուներուն, որոնք այս առիթով իրենց լուծան ձգեցին Հայ Քոյրերու Վարժարանի գանձանակին մէջ հաւատալով Հայ Վարժարանի առաքելութեան:

«ԶՕՐԱԿՈՉ» ՅՈՒՇԵՐ

ԱԻԵՏԻՄԱՋԱՐԵԱՆ

1944 թվականին տողերիս գրողը առաջին տարին էր ինչ ստանձնել էր Բալառա հայաբնակ գիւղի պատասխանատուի պաշտօնը:

Տարին մէկ անգամ կեդրոնից գալիս էր գինուորականների մի խումբ, շրջանի գիւղերից գինուորացու երիտասարդներին ցուցակագրելու, եւ առաքելու գինուորական ծառայութեան: Զօրակոչի խումբը դեկավարում էր մի գնդապետ, իր հետ ունենալով գինուորական երկու բժիշկներ, շուրջ 20 ենթասպաններ եւ հասարակ գինուորներ: 1947 թվական էր, երբ մեր գիւղը եկան զօրակոչի խումբը եւ պահանջեցին ժամանակաւորապէս մի յարմար բնակարան 4-5 սենեակից բաղկացած, որն պիտի ծառայէր որպէս զօրահաւաքի գրասենեակ: Մեր գիւղում յարմար տեղ չգտնելու պատճառով, առաջարկեցին գնալ մօտակայ Ագնա գիւղը, որն բաւական մօտ էր մեզ:

Ագնայում գիւղապետին առաջարկեցին որ իր բնակարանը տրամադրի գինուորացու թեման համար: Նա համաձայնուեց եւ յանձնարումը տեղաւորուեց յետոյ անցաւ աշխատանքի: Շրջանի գիւղապետներին յատուկ թերթիկներ տրուեցին բնակչութեան մէջ բաժանելու համար: Գիւղապետերը նաեւ պարտականութիւն ունէին իրենց գիւղի գինուորացուների անուանացանկը ներկայացնել զօրակոչի գրասենեակը:

Զինուորացուները քննութեան էին ենթարկուում գինուորական բժիշկների կողմից: Եթէ թեկնածուի մօտ որեւէ լուրջ հիւանդութեան եւ կամ մարմնային վնասածք էր նկատուում, նա ազատուում էր գինուորական ծառայութիւնից, իսկ հակառակ դէպքում առողջ երիտասարդները խումբ առ խումբ ուղարկուում էին կեդրոն, աչնտեղից էլ գնալու շրջաններ, երկու տարի զօրանոցներում ծառայելու համար: Մեր գիւղի համար ներկայացրին 200 անուններ:

Իրից բաղկացած մի ցանկ, որոնց բոլորին ճանաչում էի: Սակայն ես աշխատում էի այնպէս դասաւորել, որ գինուորացուները չճանչուէն եւ չգնան ծառայութեան: Շատ երիտասարդներ աւելորդ էին համարում գինուորական ծառայութիւնը եւ խուսափում էին ներկայ լինելուց: Բազմաթիւ հայ երիտասարդների ինչպէս նաեւ իրանցիների կարողացանք գնալու միջոցներով ազատել ծառայութիւնից օգտուելով ծանօթ գինուորականների բարեացակամութիւնից: Այդ ընթացքում կարեւոր դեր ունեցաւ մեր տներում պատրաստուած ընտիր կարմիր գինին:

Բայց եւ այնպէս հազարաւոր հայ երիտասարդներ, սիրով գնացին գինուորական երկամեայ ծառայութեան եւ իրենց քաղաքացիական պարտքը կատարեցին: Իսկ իրանի իսլամական լեղափոխութիւնից երկու տարի անց, երբ սկսեց իրան-իրաք պատերազմը, որն տեւեց ամբողջ ութ տարի բազմաթիւ հայ գինուորներ քաջաբար պատերազմեցին նախաչարձակ իրաքեան ուժերի դէմ, ստեղծելով բազմաթիւ Տերոսական դրուագներ: Այդ պատերազմի ընթացքում զոհուեցին աւելի քան 200 հայ գինուորներ: Անյայտ կորան հարիւրի չափ հայ ռազմիկներ: Ունեցանք նաեւ բազմաթիւ վիրաւորներ եւ հաշմանդամներ: Իսլամական իշխանութիւնները մեծապէս գնահատեցին հայ գինուորների սիրագործութիւնները: Յիշենք նաեւ նահատակ հայ գինուորների մարմինները ամփոփուած են Թեհրանի հայոց նոր Բուրաստան գերեզմանատանը յատկացուած յատուկ մի վայրում: Իրանահայութիւնը որպէս երկրի հաւատարիմ եւ օրինակելի քաղաքացիներ, ամէն ասպարէզում իր քաղաքացիական լրիւ պարտքն է կատարել եւ շարունակում է կատարել: Այդ են վկայում իրանի իշխանաւորների կողմից ստացուած բազմաթիւ գնահատականներ եւ պատուագրեր:

ՀԱՄԱՏԱՐԻՍ ՎԵՋԻՐԸ

Արեւելքի երկրներից մէկի թագաւորը մի վեզիր ունէր, որը օժտուած էր վարչական կարողութիւններով, ճանաչուած էր մեծահոգութեամբ եւ բարեգթութեամբ, նա ոչ չարախօսում էր, ոչ՝ բամբաստում, ոչ մարդկանց անյարգում էր, այլ մարդասէր հոգեբանութեամբ յարգուած ու սիրուած մէկն էր: Ինչպէս եղաւ օրին մէկը նրանից էնպիսի մի անիմանալի արարք ծագեց, որ թագաւորին զայրացրեց: Թագաւորը նրան գրկեց ունեցուածքից եւ պաշտօնից, հրամայեց բանտարկել եւ չարչարանքի ենթարկել:

Բանտում, թագաւորի աչքից հեռու, գաղտնօրէն վեզիրին չէին նեղացնում, նրան յարգում էին իրենց նկատմամբ ժամանակին բարեացակամ եւ օգտակար լինելու համար:

Վեզիրի բանտարկութեան լուրը հարեւան երկրի թագաւորի ականջին է հասնում, նա առիթը յարմար է նկատում վեզիրին սիրաշահել եւ օգտուել նրանից իր նպատակների համար, ուստի գաղտնի նամակ է ուղարկում նրան գրելով.

«Քո թագաւորը քո արժէքը չի իմանում, քեզ անարգելով բանտարկեց, դու ափսոս ես, եթէ ցանկանաս գալ իմ մօտ, ես քեզ կ'ազատեմ, կը հովանաւորեմ եւ շատ պատիւների կ'արժանացնեմ»:

Վեզիրը նամակի պատասխանը գաղտնի յանձնում է նամակա-

տարին: Պետական լրտես մարդիկ վեզիրի այս նամակագրութիւնը իմաց են տալիս թագաւորին, նամակատարը ձերբակալուում եւ նամակը յանձնուում է թագաւորին, նամակում վեզիրը գրել էր՝

«Թագաւորն ապրած կենայ, շնորհակալ եմ ձեր մեծութիւնից, որ մտահոգուած էք իմ մասին, սակայն չեմ կարող ձեր առաջարկը ընդունել, քանի որ կատարուած փոքր չարիքի համար չի կարելի թագաւորիս եւ հայրենիքիս դաւաճանել»:

Թագաւորը կարգալով այս գրութիւնը բարկութիւնը իջնում է, ուրախանում է վեզիրի հաւատարմութեան վրայ, ներողութիւն է ինդրում անարդարացի վերաբերմունքի համար, իրեն վերադարձնում է հարստութիւնը եւ առաւել պատիւներով պաշտօնին է վերակոչում:

Ներողամիտ կը լինես, թիւրիմացութեան հետեւանք էր, արդէն իսկ վստահ եմ քո հաւատարմութեան:

Վեզիրը ի պատասխան թագաւորին ասում է.

«Այս գործում ձեզ մեղաւոր չեմ կարծում, սա նախաինամութեան գործ էր, որ իմ կողմից սխալ թոյլ տրուէր եւ ձեր ներողամտութեամբ վերադառնամ իմ պաշտօնին եւ պատուին»:

Պարսկերէնից թարգմանութիւն Ռ. Կորիւն

1915 Թ.: ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՅԵՏԵՒԱՆՔՆԵՐ

Շարունակուած էջ 15-էն

բուրժուազիան, դրամատէրերն ու արդիւնաբերողները իրենց տաղանդի ու ձեռներէցութեան շնորհիւ, նոյնիսկ Օսմանեան բռնատիրութեան պայմաններում կարողացել էին տէր դառնալ որոշակի հարստութեան: Հայերի տնտեսական հզօրացման մէջ մեծ վտանգ տեսնելով՝ երիտթուրքերն իրենց գաղտնի ժողովներում քննարկում էին հայերի վերացումով նրանց տնտեսական մրցակցութիւնից ազատուելու հարցեր եւ միեւնոյն ժամանակ միջոցառումներ էին մշակում հայ ժողովրդի անհատական եւ հաւաքական ունեցուածքի բռնագրաւման համար: Ա. Աստուրեանը ընդգծեց, որ հայ ժողովրդի ունեզրկումը պետութեան կողմից ծրագրուած լինելու մասին բազմաթիւ վկայութիւններ կան, որոնք հաստատում են, որ դա հայ ժողովրդի բնաջնջման ծրագրում եղել է կարեւոր գործօն: Հայերի ունեցուածքի իւրացման գործին իրաւական հիմք տալու համար քեմալականները 1922-29 թթ. ընդունել են 9 օրէնք:

Հրապարակախօս, փորձագէտ

Գառնիկ Սարգսեանի գեկոյցը կրում էր «Յեղասպանութեան իրական պատուիրատուները» խորագիրը: Թուրքագէտ, պատմ. գիտ. թեկնածու Մելինէ Անումեանը «Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ» գեկոյցում նշեց, որ հայասպանների հերոսացումը նորութիւն չէ Թուրքիայում: Աչնտեղ ժամանակ առ ժամանակ ոգեկոչուում է Հայոց ցեղասպանութեան գլխաւոր եւ երկրորդական պատասխանատուների յիշատակը: Ապա անդրադարձաւ Մեհմեդ Քեմալի մահապատժին, որից յետոյ ոճրագործը հուշակուել է «ազգային նահատակ», իսկ այդին ու գաւակները վերցուել են ազգային ինամակալութեան: Մ. Անումեանի հաւատմամբ՝ Քեմալի նման ոճրագործների հերոսացումը շարունակուում է նաեւ այսօր, քանի որ նրանց շնորհիւ է Թուրքիան դարձել «ազգային պետութիւն»: «1915 թ. պատճառներ եւ հետեւանքներ» թեմայի շուրջ կարծիքներ փոխանակեցին Էդուարդ Խաչիկեանը, Սերգէյ Վարդուհանը, Յովիկ Վարդուհանը, Ալիս Յովհաննիսեանը, Տիգրան Վարժապետեանը եւ ուրիշներ:

ԻՆՉՈՒ ՆԱՐԵԿԱՑԻՆ, ԵՒ ԻՆՉՈՒՒ ՀԻՍԱ

Շարունակուած էջ 15-էն

անմահ ու միշտ կապ կ'ունենայ իր ընթերցողների հետ: Եւ իւրաքանչիւր ընթերցողի, աղօթողի հետ իր շուրթերն էլ են բարբառելու եւ աղօթելու: Կենդանի խօսքի այդ պատկերացումը ուրիշ ոչ մի բանաստեղծի մօտ չկայ՝ յաւերժական խօսքի այդ պատկերացումը, վերածամանակեայ այդ խօսքի պատկերացումը: Եւ նա ասում է՝ չկայ աւելի չքնադ բան աշխարհում, քան խօսքը:

Հարցում.-Մենք տեսնում ենք, որ Հոռոմի պապը Հայոց ցեղասպանութիւնն որակեց: Ի՞նչ կարելի էր դերակատարութիւն կ'ունենայ նրա այս պատարագը: Մենք տեսնում ենք, որ յետպատարագեայ քննարկումները շարունակուում են, շատ թէժ ու բուռն են համաշխարհային մանուկում:

-Ես սա համարում եմ ոչ թէ մեծ սկիզբ, այլ կարեւորագոյն

շարունակութիւն այն գործընթացին, որ սկսուել է: Համաքրիստոնէական արժէքների մասին է խօսքը, եւ հայ քրիստոնէութիւնը դրա նախասկիզբների հիմքում է ընկած: Հայ եկեղեցին հնաւանդ եկեղեցի է, առաջինը մենք ենք ընդունել քրիստոնէութիւնը, որն անվերապահօրէն կաթոլիկ եկեղեցին ընդունում է: Կաթոլիկ եկեղեցում Գրիգոր Լուսաւորչի պաշտամունք կայ, ու եկեղեցիներ, սրբավայրեր են կապուած նրա անունն հետ: Այս ընթացքում նոյնպէս մենք նման արարողութիւնների ներկայ եղանք: Եւ ես մեծ խորհուրդ եմ տեսնում, որ Յեղասպանութեան այդ արարողութիւնների շարքում Գրիգոր Նարեկացին հուշակուեց Տիեզերական վարդապետ, ու դրանով Նարեկացու երկնասոյգ աղօթքները գալիս են միանալու այդ յարաժամ, յաւերժական պատարագին՝ յանուն սուրբ նահատակաց:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065
Dr. Missak Ekmekdjian Chiropractor
Dr. Anahid Ekmekdjian Chiropractor
Մեծահասակներու եւ մանուկներու Բարոպրաքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօզային եւ մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:
Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԲՆԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ 5 ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Իւրաքանչիւր կին, չնայած ամէնօրեայ հոգերուն, միշտ հարց կուտայ, թէ ինչպէ՞ս լաւ տեսք ունենալ եւ քողարկել յոգնածութեան հնարաւոր հետքերը: Ներկայացուած խորհուրդները կրնան օգնել ձեզի, որ միշտ մնաք պայծառ եւ կենսունակ՝ անկախ ձեր ներքին վիճակէն:

1. Խմելու ջուր.

Սովորական խմելու ջուրը կ'օգնէ մարմնէն դուրս հանելու թոցները, բարելաւել մորթին վիճակը եւ բաւական թարմ տեսք ունենալ, քանի որ ջրագրկուած մորթը կը դեղնի, կը կնճռոտի եւ կը չորնայ: Աչքերուն կարմիր գոյնը եւ անոնց տակ յառաջացած պարկերը յոգնածութեան առաջին նախանշաններն են: Կը փափաքի՞ք լաւ տեսք ունենալ, ուրեմն խմեցէք շատ ջուր, անիկա ձեզի պիտի օգնէ ազատել յոտուցներէն:

2. Պարկեր՝ աչքերուն տակ. Եթէ դուք անհրաժեշտ չափով չէք քնանար եւ միաժամանակ անհրաժեշտ չափով ջուր չէք խմեր, ձեր աչքերը դաւաճանաբար կը մատնեն ձեր մարմնի յոգնածութեան մասին՝ անոնց տակ յառաջացնելով սեւ շրջանակներ եւ պարկեր: Յոգնածութեան այդ յայտանիշներէն ազատելու համար մասնագէտները խորհուրդ կու տան խուսափիլ աղի եւ ալքոհոլի չափէն շատ օգտագործումէն: Սակայն ի՞նչ ընել, եթէ դուք արդէն իսկ աղ քիչ կ'օգտագործէք եւ ալքոհոլին խմիչքներ չէք խմեր: Այդ պարագային պէտք է օգտուիլ հին, ստուգուած մեթոտէն, որ, թէեւ ոչ շատ մեկնաբանութիւններու կ'արժանանայ, սակայն մինչ օրս կը գործէ արդիւնատու կերպով: Խօսքը պող վարունգով աչքի թրջոցներու մասին է, որոնք կ'օգնեն վերացնել ու աչքերուն տակի ուռածութիւնը:

3. Ցերեկային քուն. Ոչ մէկուն համար գաղտնիք է, որ լաւ տեսք ունենալու համար, պէտք է շատ քնանալ, սակայն ոչ բոլորը կը յաջողին այս կէտին մէջ: Առաւել եւս, եթէ դուք կը փափաքիք ազատիլ աչքերու ուռածութեանէն, աշխատեցէք ձեր օրուան ծրագիրը կազմել այնպէս, որ ժամանակ գտնէք ցերեկը գոնէ 20 վայրկեան քնանալու համար: Ի հարկէ, ատիկա դժուար է գործատեղիին մէջ կատարել, սակայն կարելի է ընդմիջման ժամուն նստիլ ինքնազգացողութեան եւ ինքնաշարժութեան, ուր ձեզ ոչ ոք պիտի տեսնէ եւ անհանգստացնէ, նստատեղը բանալ եւ 20 վայրկեան հանգիստ ննջել: Եթէ դուք չէք աշխատիր, կը մեծցնէք, ուրեմն պարզապէս պարտաւոր էք ձեզի համար կազմակերպել ցերեկային հանգիստ, քանի որ առկայ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

ԿԵԱՆՔԻ 10 ԿԱՆՈՆՆԵՐ, ՋՈՐՍ ԴՈՒՔ ԴՊՐՈՑԻ ՍԷՋ ՊԻՏԻ ՉՍՈՐՎԵԻՔ

1. Կեանքը անարդար է: Հաշտուեցէք այդ մտքին հետ:
2. Աշխարհը, կարեւորութիւն չի տար ձեր ինքնազգացողութեան եւ ինքնաշարժութեան: Աշխարհը ձեզմէ նուաճումներ կը սպասէ, մինչեւ նկատէ ձեր ինքնագնահատականը:
3. Քիչ հաւանական է, որ դպրոցը աւարտելէ ետք ձեզի բարձր աշխատավարձ տան: Դուք ընկերութեան փոխտնօրէն չէք դառնար այնքան ատեն, որ դեռ ատոր արժանի չէք:
4. Եթէ կը կարծէք, որ ձեր ուսուցիչը շատ խիստ է եւ պահանջող, սպասեցէք ձեր տնօրէնի հետ հանդիպման: Ի տարբերութիւն ուսուցիչի՝ անոր ասպարէզի աճը կապուած է այն բանի հետ, թէ դուք ինչպէս կը կատարէք ձեր պարտականութիւնները:
5. Որեւէ ճաշարանի մէջ աշխատիլ ձեր ինքնագնահատականը

տարել, սակայն կարելի է ընդմիջման ժամուն նստիլ ինքնաշարժ, ուղեւորուիլ այնտեղ, ուր ձեզ ոչ ոք պիտի տեսնէ եւ անհանգստացնէ, նստատեղը բանալ եւ 20 վայրկեան հանգիստ ննջել: Եթէ դուք չէք աշխատիր, այլ տան մէջ երեխայ կը մեծցնէք, ուրեմն պարզապէս պարտաւոր էք ձեզի համար կազմակերպել ցերեկային հանգիստ, քանի որ առկայ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Ինչո՞ւ յատկապէս 20 վայրկեան: Այդ ժամանակահատուածը գիտնականներուն կողմէ երաշխաւորուած է ոչ պատահականօրէն. ցերեկային այդպիսի կարճ քունը չի կրնար ազդել գիշերային քունին վրայ եւ անքնութիւն չի պատճառեր:

4. Արագ գբօսանք. Աշխատանքային օրուան ամենադժուար պահուն դիւրին չէ տրամադրուիլ ֆիզիքական վարժութիւններ կատարելուն: Սակայն 20 վայրկեան ննջելէ ետք ձեզի 15 վայրկեան եւս տրամադրեցէք եւ արագ քայլեցէք:

Ատիկա պիտի օգնէ արագ արթննալուն, վերականգնելու այտերու առողջ վարդագոյնը եւ լաւ տեսք ունենալու: Իսկ ընդմիջման մնացեալ ժամանակը օգտագործեցէք անոր բուն նպատակին համար՝ կերէք: Այն մայրերը, որոնք փոքրիկներուն հետ նստած են տունը, արագ քայլը կրնան կատարել փոքրիկը գբօսանքի տանելով: Պէտք չէ վախնալ վատ եղանակէն, եթէ դուք եւ փոքրիկը տաք հագած էք, ուստի մաքուր օդը ձեզի միայն օգտակար պիտի ըլլայ:

5. Սանտրուածք եւ դիմաշարժարուն. Եթէ դուք, իրապէս, ծանր տաբուժուած էք լարուած աշխատանքով, տնային կամ այլ գործերով, վստահ որ ձեր ինամքին տրամադրուելիք ժամանակը կրնայ խախտիլ: Չէ՞ք հասնիր ամէն օր լուսալու գլուխը: Օգտագործեցէք մանկական փոշի: Որպէսզի քողարկէք յոգնածութեանէն յառաջացած գունատութիւնը, օգտագործեցէք ինքնարեւալքուք, որը մորթին կու տայ աւելի առողջ տեսք: Սակայն ամենակարեւորը՝ չի շեղեք, որ ձեր ընտանիքին անհրաժեշտ է առողջ եւ կենսունակ մայր եւ կին: Այդ իսկ պատճառով աշխատեցէք չզերյոգնիլ եւ միշտ 100%-անոց տեսք ունենալ: Պահպանեցէք դուք ձեզ:

6. Մի շտապէք ձեր անյաջողութեան համար մեղադրել ձեր ծնողները: Անյաջողութիւններու պատճառով մի արտասուէք, այլ՝ սորվեցէք անոնցմէ:
7. Մինչեւ ձեր ծնիլը՝ ձեր ծնողները այնքան ձանձրալի մարդիկ չեն եղած, որքան կը թուին ձեզի: Անոնք այդպիսին դարձած են ձեզի համար կեանքի պայմաններ ասպնովելու գումար շահելու ընթացքին, ձեր հագուստը լուսալու ընթացքին, այն ընթացքին, երբ ըսած են ձեզի, թէ որքան հրաշալի էք դուք:
8. Կեանքը բաժնուած չէ կիսամեակներու, այնտեղ ամառնային արձակուրդներ չկան, եւ շատ քիչ գործատուներ շահագրգռու են, որ դուք գտնէք ձեր «ես»-ը: Դուք ստիպուած էք ատիկա ընել ձեր անձնական ժամանակի հաշույն:
9. Իրական կեանքը մի խառ-

ԻՆՉՈՒ ՄԻԱՅՆԱԿ ԵՆ ՄԱՐԴԻԿ. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ 4 ՊԱՏՃԱՌՆԵՐ

Եթէ ունիք խոնարհ բնաւորութիւն, հրաշալի աշխատանք ու սեփական բնակարան եւ, այդուհանդերձ, դեռ կը տառապիք միակութեան, ուրեմն խորհելու առիթ կայ: Ինչո՞ւ միակ էք: Այս հարցը յաճախ իրենք իրենց կու տան թէ՛ երիտասարդ աղջիկները, թէ՛ հասուն կիներ: Փորձենք բացայայտել կեանքի մէջ յարաբերութիւններու բացակայութեան 4 հիմնական պատճառները:

1. Դուք դադրած էք փնտռել. Բազմաթիւ գործօններ կան, որոնք ձեզ կը դարձնեն միայնակ կին եւ կը խանգարեն ձեր ճակատագիրը կապել արժանի տղամարդու հետ: Սակայն հիմնական պատճառը այն է, որ դուք դադրած էք փնտռել ձեր ընտրեալը: Ի հարկէ, հրաշալի պիտի ըլլար, որ գեղեցիկ տղամարդը ինքը մտնենար ձեզի, երբ, օրինակ, գնումներ կը կատարէք ուտելիքի խանութի մը մէջ: Յաւօք, նման սենարիոյի կը հանդիպինք միայն մեկտրամաներու եւ ուղեւորիկ կատակերգութիւններու մէջ:

Պէտք է հասկնաք, որ ամենադիւրինը անձնական կեանք չունենալու պատճառով թնկիւնկալը եւ որեւէ գործողութեան չձեռնարկելն է: Եթէ դուք չփորձէք գտնել ձեր երկրորդ կէսը, դժուար է ակնկալել, որ ատիկա ինքը պիտի գտնէ ձեզ:

Պէտք է մտածել ոչ թէ այն մասին, թէ ինչո՞ւ միակ էք, այլ՝ ինչ ընել, որպէսզի գտնէք ձեր կանացի երջանկութիւնը:

Օրինակ, սկսեցէք այցելել երեկոներ, ձեռնարկներ, որոնք կրնան առիթ դառնալ հանդիպելու այն միակին, որուն մասին այդքան երկար երգած էիք:

2. Դուք խճողուած էք մէկ շրջանակի մէջ. Եթէ միշտ կ'այցելէք միեւնոյն վայրերը եւ միշտ նոյն մարդոց ընկերակցութեամբ, ուստի նոր, հետաքրքրական տղամարդու հանդիպելու ձեր կարելիութիւնները բաւական կը նուազին: Շատ դիւրին է հասարակական մէկ շրջանակի մէջ խորուիլը:

Մշտապէս նոյն շրջապատին հետ չփոխիլ կը դառնայ նոյնքան սովորական, որքան աշխատանքը, ոճը կամ մասնագիտութիւնը:

Սակայն կարելի է սարդոստայնէն դուրս ելլել: Սկսեցէք հետաքրքրուիլ ձեզի համար բոլորովին նոր գբաղումով:

Հանդիպեցէք մարդոց, որոնց հետ շատոնց չէիք շփուած:

Անոնց հետ յաճախեցէք սրճարան կամ ճաշարան, ուր նախապէս չէք եղած: Անդամագրուեցէք որեւէ խումբի: Ծայրայեղ պարագային՝

նէք անոր հետ, զոր կը ցուցադրեն հեռատեսիլէն: Կեանքի մէջ մարդիկ ստիպուած են աւելի շատ ժամանակ անցընել ոչ թէ սրճարանի մէջ, այլ՝ աշխատավայրի:

կազմակերպեցէք «կոյր» ժամադրութիւն:

Որքան աշխուժութիւն յառաջացնէք ձեր միապաղաղ կեանքին մէջ, այդքան շուտ պիտի հանդիպիք ձեր երագանքի տղամարդուն:

3. Դուք չափէն աւելի սեւեռուած էք ձեր միակութեան վրայ. Կարելի է՝ դուք չափէն աւելի կը ձնչէք դուք ձեր վրայ:

Հաւատացէք, մշտապէս ինքնախարագանումն ու սեփական ուժերուն նկատմամբ անվստահութիւնը ձեզ չեն մտնեցնէր ցանկալի հանդիպման: Անշուշտ, գիտէք, որ լաւ բաները յաճախ տեղի կ'ունենան, երբ անոնց բացարձակ չէք սպասեր: Այնպէս որ՝ վերջ տուէք դուք ձեզ ներսէն քայքայելուն եւ սկսեցէք ապրիլ ուրախ, լիարժէք կեանքով:

Եթէ դուք մշտապէս ինչաք յուսալքման գիրկը, երբ ձեր ընկերուհիներէն մէկը կ'ամուսնանայ կամ գաւակ կ'ունենայ՝ դժուար կը յաջողիք ձեր բազմաբաժնի շամուսնացածի կարգավիճակէն: Խոր շունչ քաշեցէք եւ սկսեցէք գուարճանալ կեանքով: Շուտով դուք պիտի ծանօթանաք ձեր հմայքին արժանի մէկուն հետ:

4. Դուք չափազանց զբաղած էք. ժամանակակից գործարար շատ կիներ նոյնիսկ չեն ալ կասկածի, որ աշխատանքը կրնայ դառնալ անյաղթահարելի խոչընդոտ երկար սպասուած երջանկութեան ճանապարհին: Հաւանաբար ձեզի համար նոյնիսկ դժուար է պատկերացնել, թէ ինչպէս ժամադրութեան համար ժամանակ գտնել, եւ կը գարմանաք, թէ ժամանակին ինչպէ՞ս ատոր համար ժամանակ կը գտնէիք: Եթէ դուք գրասենեակի մէջ «կ'ապրիք», իսկ մնացած ամբողջ ժամանակը կ'անցընէք մարգարհի մէջ, ուրեմն եկած է դադար տալու ժամանակը: Ծաթթուան օրակարգին մէջ աւելցուցէք կէտ, որ պիտի աշխուժացնէ ձեր առօրեան, պիտի նպաստէ նոր մարդոց հանդիպելուն եւ հնարաւորութիւն պիտի տայ անձնական կեանքը կառուցելու:

Յոգնածութեան հետքերը քողարկելու եւ լաւ տեսք ունենալու գաղտնիքներ

Ի հեճուկա տարածուած կարծիքի՝ յոգնիլ կարելի է ոչ միայն գործատեղիին մէջ: Երկար տեւող թուիչքը, ժամային գոտիներու փոփոխութիւնը, փոքր երեխան, աշխատանքի մէջ անցուցած ճշումները եւ բազում այլ գործօններ կրնան դառնալ գերյոգնածութեան պատճառ, որ չի կրնար չանդրադառնալ ձեր արտաքին տեսքին վրայ:

10. Լաւ յարաբերութիւններ պահպանեցէք «ակնոցաւոր գիտնականներ»-ու հետ: Մեծ է հաւանականութիւնը, որ ապագային անոնք ձեր տնօրէնը դառնան:

ՇՆՈՐՀԱՌՈՐԱՆՔ

Ընկեր Պետրոս Սէֆէրեան կը շնորհաւորէ Քսաններու Հարիւր Ամեակի առթիւ անմահն Փարամազի շքանշանով պարգետաւորուող բոլոր ընկերները՝ մաղթելով անոնց քաջառողջութիւն եւ երկար կեանք:

Առ այդ կը նուիրէ 100 տոլար «Մասիս»ին:

ԼՐԱՑՈՒՄ

«Մասիս»ի նախորդ համարին մէջ լրջ տեսած հանգուցեալ վահան թովմասեանի մահախօսականը գրուած է Նունէ Աւետիսեանի կողմէ:

ՊԱՏՃԱՌ ԵՒ... ԴԵՏԵԻԱՆՔ (Ա.)

Շաբաթական 6-էն

Ոչ ոք իրաւունք ունի, առաւել եւս ուժային կառույցները, ձեռք բարձրացնելու երիտասարդութեան վրայ այն տարածքին՝ որ Հայաստան Աշխարհ անունը ունի:

Ասոնք վերամբարձ խօսքեր չեն, այլ աշխարհագրական դիրքի եւ փոքրաթիւ ժողովուրդներու արժանաւայելի համակեցութեան առաջին նախապայման:

Հիմա, ըստ մեզի, շատ աւելի կարեւոր է խօսիլ ոչ թէ հետեւանք-

ներուն, այլ պատճառներուն մասին: Այսպիսի հետեւանքներու պատճառ դարձած մարդիկ պէտք է պատժուին օրէնքի ողջ խստութեամբ, եւ այս պարագային այնքան ալ կարեւոր չէ, թէ ովքեր են անոնք՝ պետական պաշտօնեաներ, "ՀէՅ"-ի ուսատանեան տարբեր ներկայացուցիչներ, թէ իրենց լիազօրութիւններուն սահմանները խախտած անհատներ...:

Այս մասին, սակայն, այս յօդուածին երկրորդ եւ վերջին մասով...:

ՀՐԱՆԴ ԿԻԻՉԷԼԵԱՆԻ՝ ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏՈՒՆԸ

Շաբաթական 14-էն

բայց կրակոտ անձ մը եղած էր: Պրն. Խանճեանի թելադրութեան վրայ էր, որ ան կարգացած էր Կիւզէլեանի գիրքը եւ անդրադարձած անոր կարեւորութեան եւ անոր թողուցած ժառանգին: Պատուելի Պերձ անդրադարձաւ հազարաւոր հայ երեխաներու վրայ թողուցած Կիւզէլեանի ազդեցութեան մասին: Ան նաեւ յատուկ կերպով անդրադարձաւ այն բացառիկ որբ երեխային՝ Հրանդ Տինքին, որ Կիւզէլեան պահեց իր թեւերուն ներքեւ: Վեր. Կիւլլէյեան ըսաւ, «Արդարութիւն առանց Աստուծոյ հնարաւոր չէ», ապա շարունակեց, ընդգծելով Կիւզէլեանի խոր եռանդը, փնտռելու եւ գտնելու կորուսած երեխաները եւ գտնուած տուն բերելու: Աստուծոյ հանդէպ իր ունեցած հօգի սիրով տոգորուած, Կիւզէլեան կրցաւ այդ երեխաներուն տալ անվտանգ ապաստանարան, ուսուցանել եւ սնուցանել գտնուած: Մենք պէտք ունինք նման լաւ օրինակներու, ինչպիսին էր Հրանդ Կիւզէլեան, ըսաւ Վեր. Կիւլլէյեան:

«Ինչպէ՞ս կրնանք շարունակել Հրանդ Կիւզէլեանի թողուցած ժառանգը»: Վեր. Կիւլլէյեան առաջարկեց «յիշել գինք եւ անոր թողուցած ազդեցութիւնը իր փրկած երեխաներուն վրայ: Եւ գործնական մակարդակով, բնաւ չդադարեցնել մեր աջակցութիւնը արտերկրի մեր դպրոցներուն»:

Խօսելով Թուրքիոյ մէջ բնակող Հայերուն մասին, Փրոֆ. Մուրատեանի յայտնեց թէ «Միասնա-

կան պաքարը շատ դժուար է»: Երբ հայերը դիմագրաւեցին ցեղապաշտութիւն, ջարդեր եւայլն, այս համանիւթին մէջ «Հրանդը նախորդող Հրանդը» դարձաւ արտակարգ երեւոյթ մը: Անոր նուիրուածութիւնը արդարութեան եւ իր անձնական հաւատքը, ստեղծած էին իրողութիւն մը, որ չէր համապատասխաններ ուրիշ ժամանակակից Թրքահայ մարդուն: Այն պահուն որ Կիւզէլեան բացաւ դպրոցին դռները, ան գիտցաւ թէ ինք բանտարկութեան թեկնածու մըն էր, մինչեւ իսկ մահուան: Թուրքիոյ իշխանութիւնները այսօր ալ եկեղեցիները կը լեցնեն պայթուցիկներով եւ կը քանդեն գտնուած: Մարդոց ճակատագիրն ալ, շարունակեց Փրոֆ. Մուրատեան, ասկէ տարբեր չէր: Այն հայերը, որոնք Թուրքիա մնացին, կը կոչուին «սուրի մնացորդացներ»: Մինչ մենք կը կորսնցնենք մեր անմիջական կապը Հայոց Յեղափոխութեան վերապրողներուն հետ, ինչպէս նաեւ հին երկրի կեանքին հետ, Թրքահայ քաղաքացիներ սկսան բացայայտել իրենց կապը իրենց մեծ մայրերուն հետ: Հրանդ Տինք մեծ դեր ունեցաւ ասոր մէջ, սակայն Հրանդ Կիւզէլեանն էր, որ բորբոքեց այդ հետքը առաջին հերթին, ըսաւ Փրոֆ. Մուրատեան:

Իրաւաբան Փիթըր Ղուկասեան, ամփոփելով օրուան յայտագիրը ըսաւ, թէ մենք՝ պարզապէս հոս հաւաքուած չենք անդրադարձնալու մեր ինքնութեան, հապա կարեւոր տեղ մը ապահովելու որպէս մէկ մասնիկ մարդկութեան, որ կը կապէ մեզ իրարու:

ՄԱՐԴՈՒ ԳՈՐԾՆ Է ՄԻՇՏ ԱՆՄԱՀ

Շաբաթական 14-էն

Վիզնի Միրզայեանը, Ստեփան Սաֆարեանը, Վահէ Ասլանեանը, Ռոբերտ Մարգարեանը, Ժուլիետ Ալլահվերդին եւ Ռազմիկ Ջարգարեանը:

Գեղարուեստական բաժնից չետոյ բազմապատակ ուսուցչուհի - կազմակերպիչ յանձնախմբի անդամ Սեդա Գրիգորեանն ընթերցեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տէր Սեպուհ Ս. Արք. Սարգսեանի ուղերձը, ինչպէս նաեւ հատուածներ ձեռնարկի կապակցութեամբ ստացուած գրութիւններից եւ ուղերձներից:

Յուշերկոյի աւարտին Լոս Անջելէսի Իրանահայ Միութեանն ու կազմակերպիչ յանձնախմբին իր շնորհակալական խօսքն ուղղեց ձեռ-

նարկին մասնակցելու նպատակով հիւրաբար Լոս Անջելէսում գտնուող հանգուցեալ Միշա Հայրապետեանի այրին՝ բազմապատակ ուսուցչուհի Ազնիւ Հայրապետեանը:

Ձեռնարկի ընթացքում, ցուցադրուած պատկերները, ինչպէս նաեւ սրահի անկիւնում կազմակերպուած ցուցահանդէսը ներկայներին առիթ ընդձեռնեցին առաւել մօտիկից հաղորդակցուելու Միշա Հայրապետեանի կեանքին ու գործունէութեանը:

Աւարտուեց յուշերեկոն, սակայն մեծարման արժանի իրանահայ գործիչների ցուցակը դեռ մնում է բաց: Միշա Հայրապետեանին նուիրուած յուշերեկոն այս շաբաթից առաջինը չէր ու անկասկած չի լինելու նաեւ վերջինը:

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱՆԱՂԱՆՆԵՐՈՒ 100-ԱՄԵԱԿԸ

Շաբաթական 8-էն

Ժապաւէնի ցուցադրութիւնը մեծ տպաւորութիւն գործեց բոլոր ներկաներուն ստերէն ու մտքերէն ներս: Քսաններու պատմական առաքելութեան նուիրուած եւ արհեստավարժական բարձր մակարդակով իրագործուած այս ֆիլմը որ թարգմանուած էր սպաներէնի, մեծ արձագանգ ունեցաւ բովանդակ Արժանիքահայ գաղութէն ներս:

Ծանօթ թատերական գործիչ Գալուստ Ճանսրզեան, որպէս խորք ունենալով Սիամոնթոյի մէկ բանաստեղծութիւնը, յուշատօնի մասնակցներուն ներկայացուց, Քսաններու եւ յատկապէս Փարամազի խօսքերով ու տիպարով համեմուած ինքնատիպ գեղարուեստական մենախօսութիւն մը, որ իրապէս յուզեց եւ ներշնչեց բոլոր ներկաները:

Հնչակեան Կեդրոնական վարչութեան Ատենապետ՝ Ընկեր Յակոբ Տիգրանեան, որպէս օրուան գլխաւոր բանախօս, ոչ միայն վեր առաւ Անմահ Քսաններու պատմական առաքելութեան իմաստն ու նշանակութիւնը, այլ շեշտը դրաւ անոնց պատգամին եւ օրինակին անժամանցելիութեան վրայ: Ապա, լուսարձակի տակ առնելով ժամանակակից պահանջներն ու պայմանները,

յստակ բնորոշումներով ներկայացուց հայութիւնն ու Հայաստանը շահագրգռող գլխաւոր մարտահրաւէրները, իւրաքանչիւրի մասին յայտնելով իր համոզումներն ու յստակ տեսակէտները:


Իր ելոյթի աւարտին, Ընկեր Յակոբ Տիգրանեան նորահաստատ «Փարամազ» ոսկեայ շքանշանով պարգեւատրեց Կեդրոնական վարչութեան անդամ եւ Շարժում Մշակ Միութեան Ատենապետ՝ վաստակաշատ Ընկեր Մամօ Սարգիսեանի, ներկաներու բուռն ծափահարութեանց ներքեւ:

Արժանիքահայ ծանօթ երգիչ, սիրուած թեյնոր Սերխիօ Զապրազեան, (որ նոյնատեւ մաս կը կազմէ Շարժում Մշակ Միութեան վարչութեան) դաշնակի ընկերակցութեամբ երաժիշտ եւ հմուտ երգահոնահար մախսթօ Միսիթար Գուտուզեանի, հրամցուց «Ծիրանի Ծառ» եւ «Կուռնկ» երգերը:

Կարդացուեցան զանազան ողջոյնի զօրակցական գիրքեր:

Յուշատօնի ակադեմիական բաժինը աւարտեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր սրտի խօսքով, որմէ ետք յոտնկայս ունկնդրուեցաւ հազուագիւտ ձայնագրութեամբ, «Հեռաւոր Երկիր» քայլերգը՝ մեկնաբանութեամբ Արմէն Կիրակի:

Save the Date
 NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA



ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
 WESTERN DISTRICT COMMITTEE

2015 GALA

SATURDAY, SEPTEMBER 26, 2015
SAVE THE DATE

Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանություն

Հանրային բնակարանների սպասման ցուցակի թարմացում


Լոս Անջելես քաղաքի բնակարանավորման իշխանությունը (HACLA) պիտի թարմացնի իր տվանդական Հանրային բնակարանների ծրագրին վերաբերող սպասման ցուցակը (սա Հասված 8 ծրագիրը չէ):

Սպասման ցուցակի թարմացման ծանուցագրերը փոստով առաքվում են հունիսի 29, 2015 թվից և դիմողները պարտավոր են պատասխանել մինչև հուլիսի 29, 2015 թվից:

Զպատասխանող դիմողները դուրս կթողնվեն սպասման ցուցակից: Եթե դիմել եք Հանրային բնակարանների համար և ծանուցագիր չեք ստանում, խնդրում ենք դիմել Ավանդական դիմումի կենտրոն երկուշաբթիից ուրբաթ, կ.ա. 8:00-ից կ.հ. 4:00-ը



HACLA Conventional Application Center
 2600 Wilshire Blvd – 1st Floor
 Los Angeles, CA 90057
 (213) 252-1020



Հանրային բնակարանների տվանդական սպասման ցուցակը մնում է բաց և ընդունվում են դիմումներ (սա Հասված 8 չէ):

Ներսէս Պետրոս ԺԹ Զայ Կաթողիկէ Պատրիարքի Մարմինը Յանձնուեցաւ Զողին

Շարունակուած էջ 1-էն

Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի ցաւակցագիրները: Սարգսեանի հեռագիրը ընթերցեց Սփիւռքի նախարարը, որ յատուկ այս առթիւ ժամանած էր Լիբանան:

Հանգուցեալ Հայրապետին մարմինը ապա փոխադրուեցաւ եւ ամփոփուեցաւ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցոյ պատրիարքներու դամբարանին մէջ:

Կենսագրական Գիծեր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքի

Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը վախճանեցաւ Հինգշաբթի, 25 Յունիս 2015-ի առաւօտեան՝ սրտի կաթուածի հետեւանքով:

Ծնած է Գահիրէ, 17 Յունուար 1940-ին, հինգերորդ զաւակն է խորապէս հաւատացեալ եւ ութ զաւակներու տէր ընտանիքի մը: Իր նախնական եւ երկրորդական ուսումները կատարած է Գահիրէի Ֆրէնչիսկոյ Գոլէճներուն մէջ:

Կանուխէն քահանայական կոչումը զգալով, ան դրկուած է Հռոմ, Լեոնեան Քահանայապետական Հայ Դպրեմանքը, եւ յաճախած է Գրիգորեան Համալսարանը փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն ուսանելու:

Քահանայ ձեռնադրուած է Գահիրէ, 15 Օգոստոս 1965-ին, ձեռամբ թեմին Առաջնորդ՝ Ռաֆայէլ Եպիսկոպոս Պալանի եւ ստանձնած է Գահիրէի ժողովրդապետութեան պատասխանատուութիւնը, օժանդակելով Գերապատիւ հայր Յովհաննէս վարդապետ Գասպարեանին, յետագային՝ Յովհաննէս Պետրոս ԺԸ. Կաթողիկոս Պատրիարք:

1968-էն 1990, եղած է ժողովրդապետ Հելիոպոլսոյ (Գահիրէ) եկեղեցոյ, յատկապէս քաջալերելով զանազան հոգեւոր շարժումներու գործունէութիւնը:

18 փետրուար 1990-ին, Աղեքսանդրիոյ Հայ Կաթողիկէ Թեմին Առաջնորդ օծուած է ձեռամբ Ամենապատիւ Յովհաննէս Պետրոս ԺԸ. Կաթողիկոս Պատրիարքին:

1992-էն 1997, իբր անդամ Եպիսկոպոսի կաթողիկէ Նուիրապետութեան, ան Ընդհանուր Քարտուղարի պաշտօն վարած է Եպիսկոպոսի կաթողիկէ եկեղեցիներու Հովուական խորհուրդին:

Իբր անդամ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ Եպիսկոպոսաց Սիւնհոգոսին, ան եղած է յաջորդաբար՝ - Անդամ Եպիսկոպոսներու Խորհուրդին՝ կառավարելու համար Պատրիարքական Ատեանը 1993-էն 1995:

- Նախագահ Քահանայական Կոչումներու Պատրիարքական Յանձնախումբին 1993-էն 1995:

- Անդամ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ Մնայուն Սիւնհոգոսի 1994-էն 1999:

Ընտրութիւն. 1999-ի հոկտեմբեր 7-ին, Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսաց Սիւնհոգոսին կողմէ ընտրուած է Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց եւ առած է Ներսէս Պետրոս ԺԹ. անունը: Քահանայապետութեան արարողութիւնը տեղի ունեցած է նոյն ամսուան 24-ին: 13 Դեկտեմբեր 1999-ին՝ եկեղեցական Հաղորդութիւն ստացած է Յովհաննէս Պողոս Բ. Սրբազան Քահա-



նայապետին կողմէ: Ճամբորդութիւններ Սրբ. Քահանայապետին հետ.

Մասնակցած է Ն.Ս. Յովհաննէս Պողոս Բ. Սրբազան Քահանայապետին այցելութիւններուն՝ Եգիպտոս (փետրուար 2000), Յորդանան (Մարտ 2000), Սուրիա (Մայիս 2001) եւ Հայաստան (Սեպտեմբեր 2001):

Մասնակցած է Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետին ուխտագնացութեան Յորդանան (Մայիս 2009) եւ անոր հովուական այցելութեան Կիպրոս (Յունիս 2010): Հայրապետական այցելութիւններ.

Իր գահակալութենէն ի վեր, հովուական այցելութիւններ կատարած է հետեւեալ առաքելավայրերը.

Յորդանան (Մարտ 2000 եւ մայիս 2009), Ֆրանսա (Մայիս 2001 եւ մայիս 2006), Շուէտ (մայիս 2001), Աւստրալիա (Յունիս 2001 եւ Մարտ 2004), Լեհաստան (Յունիս 2001, Դեկտեմբեր 2013 եւ 2014), Հայաստան (Սեպտեմբեր 2001, Յուլիս 2008, Մայիս եւ Սեպտեմբեր 2014, Յունուար եւ Ապրիլ 2015), Ուքրանիա (Հոկտեմբեր-Նոյեմբեր 2001), Պարսկաստան (փետրուար 2003, Նոյեմբեր 2004 եւ Յունուար 2015), Քեսապ - Սուրիա (Օգոստոս 2003), Եգիպտոս (Դեկտեմբեր 2003 եւ Մայիս 2004), Հալէպ (Մայիս 2004), Երուսաղէմ (Սեպտեմբեր 2005), Լատին Ամերիկա (Հոկտեմբեր-Նոյեմբեր 2005), Հայաստան, Վրաստան, Կիպրոս (Յունիս 2010), Պոլիս (Սեպտեմբեր 2014), Ռուսաստան (Ապրիլ 2015) եւ Հունգարիա (Մայիս 2015):

Գլխաւոր իրագործումներ.

Թիկուք հանդիսացած է համայնքի վարժարաններու ծաղկումին ու վերելքին, մանաւանդ քանալով երկրորդականի բաժինը Հարպոյեան վարժարանին մէջ եւ վերաբանալով միջնակարգի բաժինը Այնճար: Ինչպէս նաեւ քաջալերած է լրատուական միջոցները, յատկապէս վերահրատարակութիւնը պատրիարքութեան թեմի «Մասիս» ամսաթերթին:

Հոկտեմբեր 7, 2001-ին Հայաստանի քրիստոնէացեան 1700-ամեակին առիթով, իր ինդրանքին վրայ Հռոմի «Սուրբ Պետրոս» հրապարակին վրայ, Հայոց ցեղասպանութեան ընթացքին նահատակուած Մարտինի Առաջնորդ Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեանը Երանելի հռչակուեցաւ Յովհաննէս Պողոս Բ. Սրբազան Քահանայապետին կողմէ: փետրուար 2002-ին, առաջին

ժողովրդապետութիւնը կը հիմնէ Մոսկովա՝ նոր առաքելութիւն մը սկսելու համար Ռուսաստանի մէջ, շարունակելով 1991-ի Հայաստանի եւ Վրաստանի մէջ սկսուած առաքելութիւնները:

Յունուար 2005ին, Հոգեւոր Տիրոջ ինդրանքին վրայ եւ ներկայութեամբ ու օրհնութեամբ Յովհաննէս Պողոս Բ.ի, Վատիկանի «Սուրբ Պետրոս» Պալիգրիքայի արտաքին պարիսպին վրայ մեծ հանդիսութեամբ կատարուեցաւ գետեղումը սուրբ Գրիգոր Լուսաւորչի արձանին:

Յունուար 2005ին, սուրբ Գրիգոր Նարեկացիի մահուան հազարամեակին առիթով, Հռոմի մէջ կազմակերպեց Գիտաժողով մը, որուն հեռակայ նպատակն էր հռչակել տալ սուրբ Գրիգորը «Տիեզերական եկեղեցոյ Վարդապետ»:

Յուլիս 2006ին, Լ.Ղ.Հ-ի նախագահին հրաւերով, կ'այցելէ Ղարաբաղ: Պատմութեան մէջ առաջին անգամն է, որ Հայ Կաթողիկէ Կաթողիկոս Պատրիարք մը կ'այցելէ Ղարաբաղի Հանրապետութիւնը:

Փետրուար 2008ին, Հոգեւոր Տիրոջ նախաձեռնութեամբ, Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետը մեծ հանդիսութեամբ բացումը կատարեց եւ օրհնեց սուրբ Գրիգոր Լուսաւորչի անուան Հրապարակը եկեղեցական եւ քաղաքական հայ եւ օտար բարձր անձնաւորութիւններու, կղերականներու, մայրապետներու եւ Հռոմի ու զանազան երկիրներէ ժամանած հայ ուխտաւորներու ներկայութեամբ:

Ն. Ս. Ֆրանչիսկոս Քահանայապետը՝ ընդառաջելով իր ինդրանքին, 2015-ի Ապրիլի 12-ին, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առթիւ սուրբ Պատարագ մատուցանեց Վատիկանի «Սուրբ Պետրոս» պաղիլիքային մէջ եւ սուրբ Գրիգոր Նարեկացիին հռչակեց Տիեզերական եկեղեցոյ Վարդապետ: Յընթաց սուրբ պատարագին արտասանած խօսքին մէջ Քահանայապետը յատուկ կեր-

պով լիշատակեց Հայոց ցեղասպանութիւնը եւ անոր մէկուկէս միլիոն զոհերը իբրեւ նահատակներ եւ մեղսակցութիւն նկատեց լուծութիւնը այս պատմական իրողութեան մասին:

Հովուական թուղթեր. Զատիկուայ եւ Ծննդեան տօներու Պատգամներէն զատ, հետեւեալ Հայրապետական Պատգամներ՝

Փրկչագործութեան Յոբելէական սուրբ Տարիին առիթով 1999-2000-3 Դեկտեմբեր 1999:

Հայաստանի Քրիստոնէացեան 1700 ամեակին առիթով-31 Դեկտեմբեր 2000:

Նահատակ իգնատիոս Մալոյեանին առիթով-1 Յունիս 2001:

Մեծ Յոբելէական տարիներու առիթով - 15 Հոկտեմբեր 2001:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի արձանին առիթով - 12 Սեպտեմբեր 2002:

Հայաստանի Քրիստոնէացեան 1700 ամեակին առիթով-1 Հոկտեմբեր 2002:

Ամենասուրբ Հաղորդութեան Տարիին առիթով-30 Դեկտեմբեր 2004:

Հայկական Յեղասպանութեան 90 ամեակի առիթով-24 Ապրիլ 2005:

Սուրբ Վարդանանց տօնին առիթով-22 փետրուար 2006:

Երիտասարդներուն՝ քառասնորդացի առիթով-14 Մարտ 2007:

Աստուծոյ Գթութեան մասին առաջին համաշխարհային առաքելական համաժողովին առիթով-15 Հոկտեմբեր 2007:

Քառասնորդացի առիթով - 3 փետրուար 2008:

Քահանայական Տարուան առիթով- 6 Յունուար 2010:

Քրիստոնէական Դաստիարակութեան եւ Հայ Կաթողիկէ վարժարանի առաքելութեան մասին-3 Մարտ 2011:

Նոր Աւետարանումը այսօր - 6 Յունիս 2013:

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցը-21 Մարտ 2015:

COMING SOON

1001 nights

Authentic Middle Eastern Mediterranean Lebanese Cuisine

1001 Nights

WORLD-CLASS HOOKAH LOUNGE ENTERTAINMENT PLEASANT INDOOR OUTDOOR SEATING

1829 S. Brand Blvd., Glendale, CA 91204 | 818.552.1001